Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ.
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձըգտում է մեր հոգին,
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը՝ վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին՝ Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզո՛ր հայրենիք...

1915

ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ

Հայոց վիշտը՝ անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով
Լող է տալիս իմ հոգին:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում
Մինչև երկինք կապուտակ
Ու մերթ հոգնած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ:

Ոչ հատակն է գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին:

1902

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն՝ խավար, մեր ճամփեն՝ գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մըթնում
Երկա՛ր դարերով գընում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

դժվար

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձըր լեռներում:

Բայց քանի՛ անգամ շեկ անապատի
Օրդուները սև
Իրարու ետև
Եկա՛ն զարկեցին մեր քարվանն ազնիվ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:

հորդա

Ու մեր քարվանը շըփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ
Հեռու աստղերին,
Երկընքի ծերին,
Թե ե՞րբ կըբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:
1902

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, ու սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փըռված ու ցըրված հազար հազարով...

Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիան ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրութ, Թանդուրեք՝
Հայոց աշխարհի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև՝
Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի վերև...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
Կանչեցի թըշվառ էն հոգիներին՝ ցըրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
— Հանգեք, իմ որբեր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը դեռ երկար էսպես կը մնա...

Աջիցըս Եփրատ, ձախիցըս Տիգրիս ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր ձորերով,
Ամպերն էլ ելան Զիրավի ձորից, հըսկա բուրվառից,
Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,
Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու՝
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...
— Հանգեք, իմ որբեր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը դեռ երկա՛ր էսպես կըմնա...

1915

ԳԱՐՆԱՆ

Իմ բարի սրտով էն մեծ խոհերց,
Էն մեծ խոհերի անուն խորերց
Ես աստիճնեռը նրանց գանգուն,
Ես սուրբերը՝ խոտո, նրանոց ու գանգ:

Տեսա՝ ուտում են աղեղբն աղեղբին.
Աղեն հայրենիք՝ իրեն գաիգին,
Ես իր պաշտոնի՝ աղեն մի աստիճ,
Ես կյանքը՝ տանջանք, ցավ հաղտարած:

Ու ոչ մի երիր չեիա հանգչելու
Խոր, արարչագիան հանգրուան աներոնդ,
Ու ոչ մի անկուն չեիա չեիչելու
Շունչն աստիածային՝ մի անկոչ սրոսի...

Նկատում ինչտոի վերոստին նայեց
Իմ էս մեծ սրտին՝ աշխարհց էլ մեծ.
Նանսիմն աշխարհ, և ներ ընկճանոր,
Ես մարդը ուրախ, և երգ ասեղոր...

Ու իջավ նորից էնտեղ հանգչելու
Խոր, արարչական հանգիստն անխըոով,
Էնտեղ հանգչելու, էնտեղ շընչելու
Էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

1915 թ.

ՔԱՌՅԱԿՆԵՐ

***

Հիմի բացել են հանդես
Երգիչները իմ անտես.
Ջան, հայրենի՛ ծըղրիդներ,
Ո՞վ է լսում հիմի ձեզ:

1916

***

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկըսվում է ամեն օր:

1917

***

Ջուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:

1917

***

‘Ո՛վ իմանա՝ ո՛ւր ընկանք,
Քանի՛ օրվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն էլ երբ չքկա՝
Կըրա՛կ ընկանք, գո՛ւր ընկանք:

1917

***

Երազումըս մի մաքի
Մոտըս եկավ հարցմունքի.
- Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...

1917

***

Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,
Վատը լավ եմ տեսել ես:

1917

***

Քանի՛ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տըվել,
Լույս տալով եմ ըսպառվել:

1917

***

Ո՛նց է ժըպտում իմ հոգին
Չարին, բարուն՝ ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին:

1918

***

Լիներ հեռու մի անկյուն,
Լիներ մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

1918

***

Մի հավք զարկի ես մի օր.
Թըռա՛վ, գընաց վիրավոր:
Թըռչում է միշտ իմ մըտքում՝
Թևը արնոտ ու մոլոր:

1918

***

Երկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դըրկից.
Թախծում են պաղ ու խորհում,
Թե ինչ տարան աշխարհքից:

1918

***

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով.
Ջա՛ն, հայրենի՛ անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

մոտ

1918

***

Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նըստած իր ճըմբին,
Լոռու հանդում մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:

1918

***

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

դանդաղ

1918

***

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ինչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
Ա՛խ, թե նորից գըտնեմ ճամփան դեպի էնտե՛ղ, դեպի տո՛ւն...

1919

***

Դու մի անհայտ Բանաստեղծ ես՝ չըտեսնըված մինչ էսօր,
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր:
Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր:

1919

***

Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ՝ միտքըդ երկար, կյանքըդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ինչ են տարել նըրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղա՛ղ անցիր, ուրա՛խ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

1919

***

Ազատ օրը, ազատ սերը՝ ամեն բարիք իր ձեռքին՝
Տանջում, տանջվում, որոնում է ու դըժբախտ է նա կըրկին.
Էյ անխելք մարդ, ե՛րբ տի թողնես՝ ապրողն ապրի սըրտալի,
Ե՛րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը՝ շեն ու լի:

1919

***

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ,
Երազն էլ՝ նուրբ ու խուսափուկ, վըռազ եղավ, անցկացավ.
Վըռազ անցան երազ, մուրազ, ու չըհասա ոչ մեկին,
Կյանքըս թեթև տանուլ տըված գըրազ եղավ, անցկացավ:

1919

***

Ո՛ր աշխարհքում ունեմ շատ բան, միտք եմ անում՝ էս, թե էն.
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ էս, թե էն.
Աստված ինքն էլ տարակուսած չի հասկանում՝ ինչ անի.
Տանի՜, թողնի՜, ո՞րն է բարին, ո՞ր սահմանում՝ էս, թե էն:

1919

***

Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտըդ ըզգո՜ւյշ դիր հողին,
Ո՛վ իմանա՝ ո՞ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...»:
Հե՜յ, ջա՛ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
Էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե՞ հուր լեզուն Խայամի:

1920

***

Երնե՛կ էսպես անվերջ քեզ հետ՝ իմ կյանքի հետ լինեի.
Հազա՛ր երնեկ՝ դաշտում մենակ՝ երկընքի հետ լինեի.
Բայց ո՛վ կըտա էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի
Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի...

1920

***

Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.
Ես լըսում եմ Նըրա անլուռ կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:

1921

***

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու
Իրենց հոգու անապատից խուսափում են խառներամ
Դեպ Արևելքն աստվածային՝ հայրենիքը իմ հոգու...

1921

***

Ամեն անգամ Քո տրվածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքա՜ն է դեռ մընում,
Զարմանում եմ, թե, ո՛վ Շրոայլ, ինչքա՜ն շատ ես տրվել ինձ,
Ինչքա՜ն շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:

1921

***

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.
Ես եղել եմ, կա՜մ, կըլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ.
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի՝ տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:

1921

***

Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ.
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել Նըրա հետ.
Անհաս բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար,
Մինչև վախճանն անվախճանի քընըննում է դարե դար:

1921

***

Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպըտուղ անցավ առանց արդյունքի:
Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին...
Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին...

1921

***

Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սըրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կընքողս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

1921

***

Աղբյուրները հընչում են ու անց կենում,
Ծարավները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն՝
Պոետները կանչում են ու անց կենում:

1922

***

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

1922

***

Հեյ ճամփաներ, ճամփաներ.
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքեր անցան ձեզանով,
Ո՞ւր գընացին, ճամփաներ:

1922

***

- Էս է, որ կա... Ճիշտ ես ասում. թասըդ բեր:
- Էս էլ կերթա՝ հանց երազում, թասըդ բեր: ինչպես
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն՝ ըսպասում. թասըդ բեր:

1922

ԱՆՈՒՇ
(հատվածներ)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐԸ

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թրռչելով՝
Փերիները սարի գըլխին
Հավաքվեցին գիշերով:

- Եկեք, քույրեր, սեգ սարերի
Չըքնաղագեղ ոգիներ,
Եկեք՝ ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ:

Օխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սերին...

Ափսո՜ս, Անո՛ւշ, սարի՛ ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու յարին.
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերին...

Ու նըրանց հետ՝ ցող-արցունքով
Լըցված սըրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխուր սյուքով
Հառաչեցին էն գիշեր:

յոթ

կտրիճ
նրբակազմ

ԵՎ ՂՎԱՑՈՒՄ

Կանչում է լիրիկն, կանչում անդադար
Էն շրջնաղ երիվր կարոտը աչքուն,
Ու թևերն ախ փոսած տրտմի՛ մոմերի
Ճրոչում է հոգին, թրոչում դեպի տուն:
Ու որ հայրենի օջախ ասած
Վաղուց կարոտով ըսպասում են ինձ
Ու ձրմրուն երիսի գիշերը նըստած՝
Նստում են Լոռու խրն-խրն քաջերից:

Դեպ էն սարերը, որ վեռ, վիրխարի,
Շարած շարքերով բրոնած շուրջերի,
Ընկա՛ շուրջերի բրոնած երիվրուց,
Ընդհատ անհետ էն մեծ կարոտից

- Վուշ-վո՛ւշ, ընո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրիկ,
Վո՛ւշ քու սերովն, քու յարովն...
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, խգի՛ք,
Վո՛ւշ քու սրտած սարերովն...

- Եկէք, քույրե՛ր, սեզ սարերի
Շրջնաղացո՛ւն պտերը...
Ու փերվերն էսպես տըխուր
Երգում էին ոդջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հընչյունների իսկական,
Ու հեզ շողց ցոլքն արվի,
Ընտեն, անհետ չրքացան:

Նոր սուզվեցին ախ արքայի,
Ըստն կանչեն հաստարան,
Ու ընդայնի վերածվեին
Կնքքերը պատաճուն:

Պերճ Արագածի նազելի դըստեր,
Որ Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ,
Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լոռի:

II

Էյ հին ծանոթներ, էյ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա, ու միտըս ընկան,
Առաջըս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չըկան:
Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
Որ անցած գարնան կային ձեր լանջում.
Անցել ձեր գըլխի հերվան ձյունի պես,
Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
Ողջո՛յն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թըռչուն կարոտով փընտրում ձոր ու լեռ,
Դյութական ձայնով կանչում է հանդես:
Դո՛ւրս եկեք կըրկին շիրմից, խավարից,
Դո՛ւրս եկեք՝ տեսնեմ, շոշափեմ, լըսեմ,
Կյանքո՛վ շընչեցեք, ապրեցե՛ք նորից,
Լըցրե՛ք պոետի հաճույքը վըսեմ...

III

Եվ մութ այրերից մամոոտ ժայռերի,
Թավուտ ծըմակի լըռին խորքերից,
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում եմ նորից:
Թընդում է զըվարթ աղմուկը բինի,
Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից,
Ու բոլորն ահա նորից կենդանի
Ելնում են աշխույժ վաղորդյան մութից,
Ու թա՛րմ, ցողապատ լեռների լանջում...
Սո՛ւս... ակա՛նջ արա,- հովիվն է կանչում...

վիթխարի

անցյալ տարվա

սարաստեղի

սարվորի վրան

V

- Ա՛խ, սիրտըս, նանի՛, չըգիտեմ ընչի,
Մին լաց է լինում սևակնա՛ծ, տըխո՛ւր,
Մին թև է առնում, ուզում է թըռչի
Չըգիտեմ թե ո՛ւր, չըգիտեմ թե ուր...
Նանի՛ ջան, նանի՛, ես ինչպե՞ս անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալեդ.
Նանի՛ ջան, նանի՛, կուժը թող առնեմ,
Աղբյուրը գընամ աղջիկների հետ...

VI

- Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
Էն ո՞ւմ յարն է նըստած լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, զուլա՛լ ջըրեր,
Որ գալիս եք սարերից,
Գալիս, անցնում հանդ ու չոլեր,
Յարս էլ խըմե՞ց էդ ջըրից:

Յարաբ խըմե՞ց, յարաբ հովցա՛վ
Վառված սիրտը էն յարի,
Յարաբ հովցա՛վ, յարաբ անցա՛վ
Անքուն ցավը ջիգյարի...

- Աղջի՛, քու յարն եկավ անցավ
Վառված, տարված քու սիրով,
Էրված ջիգյարն՝ եկավ անցավ,
Չըհովացավ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
Ա՛խ, իմ ազիզ յարն է լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում:

արդյոք, տեսնես

VIII

Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես,
Մընում էր յարին,
Ու չեկավ նա տես:
Խեղճը դողալով՝
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ,
Ուռենի դարձավ:
Ջըրերի վըրա
Գլուխը կախած՝
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ո՛նց է մոռանում...

XI

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ,
Չեմ հասկանում՝ դեպի ուր...
Դողում է պաղ նըրա ձեռնից
Իմ սիրտը՝ սև ու տըխուր:

Դուք էլ, սարի սիրո՛ւն ծաղկունք,
Թաքուն մի ցավ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն է արցունք,
Սիրտներըդ՝ սև ու տըխուր:

Ա՛խ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջվում են միշտ էսպես զուր,
Տըրորվում են ու թառամում՝
Սիրտները՝ սև ու տըխուր:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

XII

Ձըմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի.
Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լեն հըրապարակ
Բաց արին մեջտեղն արձակ գըլխատան,
Ջուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:

ըմբշամարտ

գլխավոր սենյակի

XIV

Եվ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր.
Արյուն է կաթում սևակնած սըրտից,
Գընում էր ըշտապ, քայլերը մոլոր:
- Ամո՛թ քեզ, Մոսի՛, թո՛ւք ու նախատինք,
Ամո՛թ քեզ նըման գոված իգիթին,
Մի անո՛ւնդ հիշիր, մի բոյի՛դ մըտիկ,
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:
Ինչպե՜ս վեր ընկար դո՛ւ՝ սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գյուղը կանգնած...
Դո՛ւ... կուչ գաս տակին Սարոյի ծընկան,
Ընրանից հետո երևաս կանա՜նց...
Եկա՛ծ էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դե մեռի՛ր, էլի՛, գետի՛նը մըտիր,
Տանը վե՛ր ընկիր՝ իլի՛կ պըտըտիր...

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ, ուղտերի նըման
Նոր են ջուր խըմած՝ ձորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Չաթինդաղ լեռան
Նոր է արևը պըռունգը հանում:

եզրը

Գիտության արմատից իրար են աճեցնում
Կրտեր ծերերին կանայք հանաքից,
Տղերքը պեպի գարափն են վազում՝
Հրացանի վրկերից փոսեր են փորում:

XXI

Ու մեն է գալի սարերը ընկած
Սարն փակցած եղջերի նըմուն,
Օրական աաջին, զընդաին ետնց,
Հետնը՝ ընկերը, ընկերը՝ ուշաւն:

Եվ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերց իջնում, խաիարն է պատում,
Ղըմա բայաբի ողբում է սրտում,
Ընկեր սարերն խոսում, զանգատիում:

- Ֆա՛ջըր սարեր, ա՛յ սարեր,
Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձե՛ն տըվեք,
Ես պատվեր ա՛յ սարե՛ր:

XXIII

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց,
Գյուղից սըլացան մի խումբ կըտրիճներ:
Ցավից տաքացած՝ էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածված,
Ու նըրանց առջև ահռելի բացվում,
Թըշ22ում է ձորը՝ արյունով լըցված:

XXIV

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խոսելու, սևակնած, դաժան
Մոտեցավ սրահին, կախ տըվավ սընին
Սև հըրացանը՝ սև օձի նըման:

XXV

Ողբացին անշունչ դիակի վըրա՝
Անտեր մընացած ոչխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ յարի մասին.
Եվ նըրա մասին, որ ընկերները
Հանդը գընալիս Սարո կըկանչեն,
Որ սարից փախած սոված շըները
Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն:
Ծանըր չոմբախը, գըլուխը մեխած,
Օճորքում դըրած պիտի մըրոտի,
Երկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մընա, ու ժանգը պատի...
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գնալ առանց Սարոյի:

մահակ
ձեղուն, տանիք
դաշույն

Սև շորեր հագած՝ կընըստի տանը,
Անցած օրերը միտը կըբերի:

- Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արև՛, կյանք ու ջա՛ն որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Թըշնամի՛ որդի, դավաճա՛ն որդի...

Գիշերը ընկավ, թանձրացավ մութը,
Ու նըվաղեցին ձեները տըրտում,
Հոգնեցի՛ն, հանգա՛ն... Ծերուկ Դեբեդը
Սըգում էր մենակ խավար անդընդում:
Սըգվոր գետը՝
Ծեր Դեբեդը,
Սիրտը քըրքրած,
Ջուրը փըրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին,
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

XXVII

- Սիրո՛ւն աղջիկ, ինչ ես լալիս
Էդպես մենակ ու մոլոր,
Ինչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերում ամեն օր:
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կըգա, մի քիչ կա՛ց,
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,
Ա՛խ, նա գընա՛ց, նա գընա՛ց...
Արտասվելով, լալով էդպես
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՛ւ իզուր հանգցընում ես
Ջահել կըրակն աչքերիդ:

Ֆայց լալիս է նա ու երգեր ասում
Ու մշտ էլ ասվում տրտունջն է խոսում,
Ափ էլ զրնա նոր սէր տա,
Էսպես է կարգն աշխարհի:

- Շորիանալ ես, աղջիկ ախպեր,
Սատիճ պախ քու յարդն.
Ջսմփող վերջում կաղձած է դեռ՝
Սնուշ ձիձաղն աչքերդն...
Ուրախ սրտիվ դուք ձեր սեր
Վայելեցեք ամեռասմ,
Ինձ արցունք է տրվել տեղը,
Ես պիտի լալ, պիտի լալ...

Ու մեռ է զալիս,
երգում ու լալիս:
երգեր՝ ամեռաս, երգերը՝ տրվում,
Արցունքի նման հոսում են իրար.

XIXX

Հայրենական զիշեր, էն դյուրիկ զիշեր,
Կա հրամշալի, երջանիկ վայրկյան.
Ֆայլում են ոսկի երիզներ,
Երգի՝ պապանձում, լռում ամեն բան
Ու աստիճանն ամեռս խորհրդոսկ
Լցվում բոլոր սրտեր զրոսիկ:

Էն վեհ վայրկենին չքքնաղ գիշերի՝
Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թրռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում:

անգամ
երկնագույն

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ
(հատվածներ)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հե՛յ, պարոննե՛ր, ակա՛նջ արեք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին:

գուսան

Մենք ամենքըս հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուչ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

Անց են կենում սեր ու խընդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՛կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անեծք նըրա չար գործքին,
Որդիդ լինի, թե հերն ու մեր,
Թե մուրազով սիրած կին:

փափագ, իղձ

Ես լավության խոսքն եմ ասում,
Որ ժըպտում է մեր սըրտին.
Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը, լավ մարդին:

թշնամի

Էյ, լա՛վ կենաք, ակա՛նջ արեք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խոսքըս, տեսե՛ք, ո՞ւր է գընում,
Քաջ որսկանի գյուլլի պես:

գնդակի

II

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թե աշուղն էլ ուներ,
Առանց զենքի,
Առանց զորքի
Շահերի դեմ կըգընար:

Սիրո հընոց,
Կրակ ու բոց՝
Էնպես աչքեր թե ժըպտան,
Մարդու համար
Օրվա պես վառ
Գիշերները լույս կըտան:

Վարդի թերթեր՝
Էնպես շուրթեր
Թե հաղթություն քեզ մաղթեն,
Էլ քեզ ո՛չ Շահ,

Ո՛չ ահ ու մահ,
Ո՛չ գենք ու զորք կրիաղթեն:

III

Ու կըռվի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
- Նըրան՝ իր տեսքով, հասակով,- ասին,-
Չի հասնի չըքնաղ հուրին Իրանի: գեղեցկուհի
Ծով են աչքերը Ջավախքի ղըստեր,
Ու կորչում է մարդ նըրա հայացքում,
Ճակատը՝ ձերմակ էն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում:
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրովն է հարբած էն հըսկան,
Նըրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առյուծի նըման:
Թե տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին,
Թաթուլն էլ անզոր կընկնի ոտիդ տակ,
Հանգիստ կը տիրես և Թըմուկ բերդին,
Որ չես կարենում էսքան ժամանակ:

IV

Էսպես է ասել հընուց էդ մասին
Ֆարսի բյուլբյուլը՝ անմահ Ֆիրդուսին. պարսից սոխակը
- Ինչը կըհաղթի կյանքում հերոսին,
Թե չըլինին
Կինն ու գինին:

VI

Երգում է աշուղն իր Շահի սերը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ Թըմկա տիրուհին.
Եվ վըրդովում են իր միտքը թաքուն
Դավաճան գործի ամոթը խորին
Եվ արքայական փառքն ու մեծություն...

VII

- Էն մըթին ամպից արծիվն է իջնում,
Սարի արծիվը շեշտակի թափով:
- Էն Թըմկա բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

- Էն Թըմկա ձորում սև ամպն է գոռում,
Էն շանթն է ճայթում էնպես ահարկու:
- Էն Թըմկա ձորում Թաթուլն է կըռվում,
Էն թուրն է շաչում էնպես ահարկու:

Ինչ սարի արծիվ կըհասնի քաջին,
Ինչ Շահ կըկանգնի նըրա առաջին:

IX

Դամ... դամ... ելեք... կոչնամ... պահնամ...
Ջենք առեք շուտ... ձի հեծեք, ձի...
Ճըռընչում են, դըղըրդում են
Դարպասները երկաթի...

X

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վըրա, Ջավախքի վըրա,
Ավերակ բերդին, սև ամպի նըման,
Ծուխն ու թըշնամին չոքել են ահա:

Հաղթության փառքով ու գինով հարբած՝
Քընած են բերդի մ՛ զորքերն, և տե՛ր,
Ու հավիտյան էլ մընացին քնած՝
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

Նըստած է Շահը. նըրա առաջին՝
Ահա իրիկվան քեֆի սեղանը.
Նայում է Շահը անտեր գահույքին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
Ո՛չ բախտի, փառքի, ո՛չ մեծ հաղթության,
Ո՛չ սիրած կնկա տըված բաժակին...

Ու լի դառնությամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն Թըմկա տիրուհուն.
- Պատասխա՛ն տուր ինձ, մատնի՛չ սևաչյա,
Միթե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

- Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա...

XII
Հե՛յ, պարոննե՛ր, ակա՛նջ արեք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին:

Ամենքս էսպես հյուր ենք կյանքում
Մեր ծնըն դյան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ.
Ա՛խ, երանի՛ ով մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ:

1902

ՓԱՐՎԱՆԱ
(հատվածներ)

I
Բարձրագահ Աբուլն ու Մըթին սարեր
Մեջք մեջքի տըված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին՝ Ջավախքից էլ վեր,
Բրոնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ էնտեղ արծըվի նըման՝
Ծիծողուն, կապուտակ երկընքի ծոցում,
Նըստում էր էն սեգ սարերի արքան
Իրեն Փարվանա ձերմակ ամրոցում:

Փարվանա արքան մի աղջիկ ուներ,
Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
Էնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել
Իր որսն անելիս Մըթին սարերում:

գվարթ

II
Հընչեց փողը: Ահա փունջ-փունջ
Դըրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նազելի
Ու թագավորն ալեհեր:
Հայրը՝ ինչպես մըռայլ մի ամպ,
Աղջիկն՝ անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարված՝
Դուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարհքը.
Կըտրիճները՝ քարացած,
Երազների մեջ են ընկնում՝
Էս աշխարհքից վերացած:
- Նայի՛ր, դըստրի՛կ, իշխանազուն
Էս քաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդես դուրս գան,
Պայքար մըտնեն քո առաջ.
Մեկը իրեն ուժը ցույց տա,

պալատական

Մյուսը՝ շընորհքն իր բազկի,
Ո՛րը՝ ճարպիկ ձիարշավը,
Ո՛րն էլ թափը իր վազքի:
Իսկ երբ կըռիվն առնի դադար,
Հայտնի լինին քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջևից
Կըտրիճները պայազատ, ազնվազարմ
Ընտրի՛ր, զարկի՛ր ձեռքիդ խնձորն
Անհաղթներից անհաղթին,
Որ ողջ աշխարհ մայիլ մընա հմայված
Անզուգական քո բախտին:

Ասավ արքան, ձեռքը ձըգեց,
Նըշան տըվեց պայքարին,
Այնինչ աղջիկն առաջ եկավ՝
Կարմիր խնձորն իր ձեռին:
- Գուցե, հայրի՛կ, տըկար լավին
Հաղթի մի վես տըմարդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սըրտի...
- Էյ, Փարվանա չըքնաղ փերի,
Ի՞նչն է հավան քո սըրտին,-
Խոնըվում են կըտրիճները,
Խընդրում կըրկին ու կըրկին:-
Գա՞նձ ես ուզում, ոսկի՞, արծա՞թ,
Անգին քարեր ու գոհա՞ր,
Ա՞ստղ ես ուզում, մենք երկընքից
Վեր կըբերենք քեզ համար:
- Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ
Եվ կամ աստղը երկընքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սեր-ընկերից իմ կյանքի:
Ես նըրանից հո՛ւր եմ ուզում,
Անշեջ հուրը սըրբազան,
Ով կըբերի անշեջ հուրը, անմար
Նա է ընտրած իմ փեսան...

Ասավ աղջիկն. իրար անցան
կըտրիճները քաջարի,
Ձիանք հեծած՝ թըռան հապճեպ
Դեպի չորս կողմն աշխարհի:
Թըռան՝ շուտով գըտնեն, բերեն
Անշեջ հուրը աղջըկան.
Բայց... տարիք են գալիս, գընում,
Նըրանք չըկան ու չըկան...

III

- Հայրի՛կ, ինչո՞ւ ետ չըդարձան
Էն քաջերը սիրատենչ.
Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,
Էլ չեն բերիլ հուրն անշեջ:

- Կըգա, դըստրի՛կ իմ թանկագին,
Հեշտ չի բերվում հուրն անշեջ.
Շատ, շա՛տ անգամ բերող հոգին
Ինքն է այրվում նըրա մեջ...

Անց է կենում դարձյալ տարին:
Նայում է կույսն ամեն օր.
Ոչ մի սարից, ոչ մի ճամփում
Չի երևում ձիավոր:

- Հայրի՛կ, հայրի՛կ, մի՞թե չըկա
Էս աշխարհքում անշեջ հուր.
Թառամում է սիրտըս ահա,
Պաղ է էս կյանքն ու տըխուր...

IV

Էսպես անցան շատ տարիներ.
Տըխուր աղջիկն արքայի
Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր,
Ճամփաներին ամայի,

Հույսը հատավ... ու լաց եղավ.
Էնքան արավ լաց ու կոծ,
Որ լիճ կըտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկեց, կորան, ինքն էլ հետը...
Այժըմ էնտեղ տըրտմաշուք
Խոր Փարվանա լիճն է ծըփում
Հըստակ, ինչպես արտասուք:
Ու էն վըճիտ ջըրերի տակ
Յույց են տալի մինչ էսօր
Ծեր արքայի ճերմակ ամրոցն
Ու շենքերը փառավոր:

***

Ասում են՝ էն թիթեռները,
Որ գիշերվա խավարում,
Որտեղ ճըրագ, որտեղ կըրակ,
Որտեղ լույս է հենց վառվում,
Հավաքվում են, շուրջը պատում,
Մեջն են ընկնում խելագար,
Ասում են, թե էն Փարվանա
Ջահիլներն են սիրավառ:
Ըշտապելուց թև են առել,
Դարձել թեթև թիթեռներ,
Ու տակավին հուր տեսնելիս
Մեջն են ընկնում անհամբեր.
Ջանք է անում ամեն մինը՝
Շուտով տանի, տիրանա...
Ու այրվում են, այրվում անվերջ
Կըտրիճները Փարվանա:

1902

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ (1875-1957)

***

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամուրջին,
Հորդ մազերը՝ գետ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը սև՝ արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխըս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի:

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի.
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի...

1925

սև հոնքերով

ՌԱՎԵՆՆԱՅՈՒՄ

քաղաք Իտալիայում

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ադամանդին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դո՛ւ էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...

1926

ՄԵՐ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

Նվեր մեր ժողովրդական վեպի՝
«Սասունցի Դավիթ»-ի հազարամյակին

I
Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում՝ մենության մեջ,
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրրա դժգույն՝
Եղեռնները, նախճիրները հորդաների արյունարուշտ,
Փլուզումը հայրենիքի և ոսոխի սուրը անկուշտ:
Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի:

II
Մեր գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օջախի շուրջը նստած՝
Գուսանները մեր խանդավառ, առջևները գինի և հաց,
Վիպերգեցին հաղթանակը դյուցազնների մեր մեծազոր
Եվ ծաղրեցին պարտությունը ոսոխների մեր բյուրավոր:
Եվ հյուսեցին պատմությունը հավերժացող ժողովուրդի,
Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի.
Տեսան շքեղ մեր ապագան, անընկճելի ազատ ոգին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած Թուր-Կայծակին:

1939

***

Գիշերն եկավ, զով–հովն ընկավ,
Աստղունք լուսնին ձայն տվին.
Լուսնյակն ելավ, մով–ծովն ընկավ,
Հավքերն ինձի ձայն տվին:

Ես վեր ելա՝ ոգի առած,
Ջարկի սրտիս լարերին.
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց,
Եվ լարերը խզվեցին…

– Միայն սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրո երգը շողաց
Կյանքիս ամեն ծալքերում…

1893

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Յորենի ծըփուն արտերի եզրին
Կանգնել խորհում եմ սրտիս մեջ լռին.

«Միթե դու չէիր, հայրենի՛ք իմ հեզ,
Որ տայգաներից, մթին յուրդերից
Հորդացող–եկող ելուզակների
Բյուր նիզակ ու տեգ
Սրտիդ մեջ մխված՝ ընկել էիր խեղճ
Քառուղու վրա բախվող ազգերի,
Դաժան դարերի մղձավանջի մեջ,
Սմբակների տակ խոլ նժույգների.
Եվ սրում էին ճիչով խնդագին
Անգղներն իրենց կտուցները վես
Քո արևակեզ ժայռերի վրա՝
Հոշոտելու քեզ…

թաղիքե վրան

կատաղի, ամեհի

Եվ սակայն հիմա
Դու նորից ծաղկել, ցնծում ես նորից,
Ելնում է ծուխը խրճիթներից հին,
Ուր մայրըս անուշ օրորել է ինձ,
Իմաստավորել մանուկ իմ հոգին
Քո հզոր լեզվով, երկի՛ր կաթոգին:
Այնքա՜ն ժամանակ, որ պիտի հերկե
Սևահողըդ հին քո կտրիճ որդին,
Եվ գուսանըդ վառ սերըդ պիտ երգե,
Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչե՜ս, հնչես հաղթակա՜ն,
Իմ հի՛ն հայ լեզու՝ քաղցր ու արտաբո՛ւխ»:

1929

ԱՐԱԳԱԾԻՆ

Դո՛ւ, Արագա՛ծ, ալմաստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:

Սեգ ժայռերդ՝ արծվի բույն,
Լճակներդ՝ լույս-փերուզ.
Առուներդ՝ մեջքիդ փայլուն
Պերճ գոտիներ ոսկեհյուս:

Աղբյուրներդ՝ գիշեր ու զօր
Խոսքի բռնված իրար հետ,
Վտակներդ՝ գիլ ու գլոր
Արբեշումե փեշերեդ:

վետաքան

Թիթեռներդ՝ հուր-հրեղեն
Թռչող-ճախրող ծաղիկներ,
Ջառ ու զարմանք երազներեն
Պոկված ծվեն-ծվիկներ:

Ծիրանավառ դո՛ւն թագուհի,
Բուրումների դո՛ւն աղբյուր,
Ծաղիկներդ՝ հազար գույնի,
Հազար անո՛ւն, հազար բո՛ւյր:

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ

Դարդը սըրտիս, աղքատ ու խեղճ, ցուպը ձեռիս, գլխակոր,
Շա՛տ տարիներ պանդուխտ եղած՝ նորեն դարձա հայրենիք.
Կյանքի բեռով մեջքս ծռած, միտքըս շվար ու մոլո՛ր՝
Յոթը սարեն, յոթը ծովեն դարձա նորեն հայրենիք:

Իմ հայրենի գեղի հանդում տեսա մանկութ ընկերիս.
- Ա՛խ, ընկե՛ր իմ,- կարոտ սրտով նըրա առաջ վազեցի,
Ասի. - Բարո՛վ, անգի՛ն ընկե՛ր, չե՞ս ճանաչում դուն ինձի:-
Ախըր ես շա՛տ փոխվեր էի... չըճանաչեց նա ինձի:

Ցուպը ձեռիս գեղը մտա, անցա յարիս տան ճամփով.
Տեսա՝ յարըս՝ վարդը ձեռին, մենակ կանգնած դռան մոտ.
Ասի. - Քուրի՛կ, ազիզ տեսքիդ արժանացա ես բարով...-
Նա էլ ինձի չըճանաչեց... Աղքատ էի ու փոշոտ...

Դարդը սրտիս՝ հասա մեր տուն, տեսա ծերուկ, խեղճ մորըս.
Ասի. - Նանի՛, ճամփորդ մարդ եմ, գիշերս ինձ հյուր կընդունե՞ս:-
Ա՛խ, մերի՛կ ջան... վզովս ընկավ, սըրտին գըրկեց ու լացեց.
- Ա՛խ, բալա՛ ջան, ղարի՛բ բալա, էդ դո՞ւն ես...

1902

***

Սև–մութ ամպեր ճակտիդ դիզվան,
Դուման հագար, Ալագյա՛զ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս է՛լ դուման, Ալագյա՛զ:

Ջառ փեշերդ անցա, տեսա,
Առանց դարդի սիրտ չըկար,
Ա՛խ, իմանաս, ջա՛ն Ալագյազ,
Իմ դարդիս պես դարդ չկար…

– Է՛յ, Մանթաշի նըխշո՛ւն հավքեր,
Իմ դարդըս որ ձերն եղներ,
Ձեր էդ զառ–վառ, խաս փետուրներ
Կսևնային, քանց գիշեր:

– Է՛յ, Մանթաշի մարմա՛նդ հովեր,
Իմ դարդըս որ ձերն եղներ,
Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թույն ու տոթի կփոխվեր:

– Հե՛յ վա՛խ… կոտրան իմ թևերս,
Ընկա գիրկըդ, Ալագյա՛զ.
Ա՛խ, մեծ սըրտիդ սեղմեմ սիրտս,
Լամ, արուն լամ, Ալագյա՛զ…

1898

ջառ՝ ձոր
մշուշ՝ մշուշ
ոսկեհյուս՝ ոսկեհյուս
վիշտ՝ վիշտ
մետաքսե՝ մետաքսե
մեղմ՝ մեղմ

***

Էյ կանանչ ախպեր, դու բարով եկար,
Դո՛ւ բարով եկար, իմ կանա՛նչ ախպեր:

Մով մանուշակով ծաղկուն սարերեն
Արտուտն ու արոս ինձի ձեն տվին,
Ու գարնան անուշ արևն ոսկեղեն
Ինձի ձեն տվին՝ սար ու ձոր ելնիմ:
Երանի՛կ ձեզի, սարե՛ր ու ձորե՛ր,
Նիշուն հագել եք գարնան զուգաերով.
Ա՛խ, սիրտս մեռավ ծով դարդերի մեջ,
Գարնան զուգաերին մնաց կարոտով:
Էյ սարեր, ձորեր, դուք առաջվանն եք,
Ջրե՛ր գլգլան, դուք առաջվանն եք,
Լոկ մենակ ես եմ փոխվել ու չորցել,
Բլբո՛ւլ ու բաղե՛ր, դուք առաջվանն եք,
Ա՛խ, ես եմ փոխվել ու աշխարհի մեջ
Հիվանդ ու անհույս ճամփորդ եմ դառել
Ու անդարձ ճամփով կերթամ մթի մեջ,
Արև-արեգա՛կ, դուք առաջվանն եք...

Էյ կանանչ ախպեր, կուգաս գալ տարի
Ու գերեզմանս մամոով կզուգես,
Իմ կանա՛նչ ախպեր, գալդ միշտ բարի,
Խեղճ գերեզմանս մտքեդ չգցես...

1902

ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ
(հատվածներ)

Աբու-Լալա Մահարին՝
Հռչակավոր բանաստեղծը Բաղդադի,
Տասնյակ տարիներ ապրեց
Խալիֆաների հոյակապ քաղաքում,
Ապրեց փառքի և վայելքի մեջ,
Հզորների և մեծատունների հետ սեղան նստեց,
Գիտունների և իմաստունների հետ վեճի մտավ,
Սիրեց և փորձեց ընկերներին,
Եղավ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում,
Տեսավ և դիտեց մարդկանց և օրենքները:
Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց մարդուն,
Ճանաչեց և խորագին ատեց մարդուն
Եվ նրա օրենքները:

հոգևոր առաջնորդ

Եվ որովհետև չուներ կին և երեխաներ,
Բոլոր իր հարստությունը
    բաժանեց աղքատներին,
Առավ իր ուղտերի փոքրիկ քարավանը՝
    պաշարով ու պարենով,
Եվ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել
Տիգրիսի նոճիաճածկ ափերի վրա,
Գաղտնի հեռացավ քաղաքից...

ԵՐՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

գլուխ, մաս

Եվ քարավանը Աբու-Լալայի,
    աղբյուրի նման մեղմ կարկաչելով,
Հանգիստ, միաչափ քայլում էր առաջ
    հեզ լուսնկայի շողերի միջով:
Եվ լուսինն, ինչպես ջեննեթի մատաղ
    փերիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ,
Մերթ ամաչելով պահվում էր ամպում
    և մերթ թրթռուն փայլում էր պայծառ:

դրախտ

Նիրհ էին մտել ծաղկունքը բույրյան՝
աղամանդներով, շքեղ գինդերով,
Ծիածանաթև հավքերը իրար
գուրգուրում էին քնքուշ մրմունջով:
Մեխակի բույրով հովն էր շշնջում
հեքիաթներն հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ քնի մեջ
օրորվում էին ճամփեքի վրա:
Հովի զրույցին ունկն դնելով՝
Աբու Մահարին խոսում էր անձայն.
- Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝
անսկիզբ, անվերջ, հրաշք դյութական:
Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ,
հյուսել աստղերով, բյուր հրաշքներով,
Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝
անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով:
Ազգեր են եկել, ազգեր գնացել
և չեն ըմբռնել իմաստը նըրա.
Բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ
և թոթովում են հնչյուններն անմահ,
Ոչ ոք չի լսել սկիզբը նըրա
և չի լսելու վախճանը նըրա,
Ամեն հնչյունը դարեր է ապրում,
ամեն հնչյունին վերջ, սկիզբ չկա:
Բայց ամեն մի նոր ծնվածի համար
նորից է պատմվում հեքիաթն այս շքեղ,
Նորից սկսվում և վերջանում է
ամեն մի մարդու կյանքի հետ մեկտեղ:
Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ,
ազգեր, սերունդներ՝ անցնող քարավան,
Որ հեքիաթի մեջ, վառ երազի հետ,
չվում է անտես դեպի գերեզման:
Կույր ու գուլ մարդի՛կ, առանց երազի,
առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եք հանում
և դարձնում աշխարհն՝ ահավոր ջեհենեմ:

Ձեր օրհնքներդ՝ լուռ ու խաղաղ
և անեք մի ցանց խոսիկն սարսռ,
Եվ որոց ժպիտ լուսահոգիս նք
Որք բլրուկ, ադաղձր ալիսի,
- Գեմ, բաժակն, մեղր հնչյունեղող
Կրկնվի մարի լուսո-տխուր բնության
Վիշտս ստոր հովնի, բաշխի բնության
Ձոցը մայրական և մի՛ նայիր նու:
Տա՛ր ինչ լուսաբեան, օտար մի եզերք,
Նեռու, հեռաիր, մեղաիր ափեր.
Մուրը մեղաիրան, ու՝ իմ օաքս,
Ու՝ բաղձալի արբայր զուիաբեր:
Լռության նիկիք, խոսի՛ր ու ինձ նեա
Եվ ուղայաշուչ հոլշնր կոշչն
Ձեր ոսկոնվի բաբվի մեա,
Դու միայնակ ու՝ ավիար
Բաբն այն չքնաղ, հեքիաթն այս ոսկյա:-
Գոհար աստղաիմաձի վեղևտոա մոսկա
բաբափայել էին նիկի ձաւրիքիչ,
Եվ պաշտում էր ոչ նիկիքն ատիուն՝
աստղալ պայծառ, աշշեջ զբոսող:
Եվ արա-աղվար լցիաչ էր, ոսուցիաչ
բյուր նվաքնիաի հայիքն նիկայն,
Եվ աստղշնորհ նա մեղաուլաց
ի՛ ստր արտաար, ի՛ ներ աստահաւն:

Ոգին աքսոր է, նա չեմ խաղողրդուս
իմ միս իշխող ոչ մի զորուրյուն,
Ո՛չ օրենք, սահուն, ո՛չ ճակատագիր,
ո՛չ չար ու բարի և ո՛չ պատասուն:
իմ գլխի վերն չափոր է լինի
ոչ մի հոգեր, ոչ մի իմաստուն,
եվ իմ կյանքից դուրս ամեն ինչ բաներ է,
ո՛ւ ստիպացում, ո՛ր բռնադատում:
ես իրավ լինել ազատ ամեն տեսակ,
ազատ ոչխարի պես անտեսած,
Հոգիս տեղ է մեծ, մեծ մեծությունը
ունքը աքսորյալ՝ անհուն, անդադար:-
եվ քամիները հյուսիսում էր ամաց,
և նրանք վերև շրջում էին միասո
Մեղիա ծալտած ամենամեծ զորս,
այն հակերծակիայլ աչքերը զոհար:
եվ կանչում էին դրան կաթոգի
յուր ամենաերեսը ոսկի ատեղի
եվ հոգին լցնում սուր ցնծագիսի
եվ խոգին լցնում սուր ցնծագիսի:

Բարեկամներից հեռու տար դու ինձ,
որոնք անկշտում մժղուկների պես
Հետևում են քեզ, երբ արյուն ունես,
իսկ երբ ցամաքես, կմոռանան քեզ:
Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ,
թե չլինեին ընկեր, բարեկամ,
Որոնք համբույրով սիրտս բացեցին,
որոնք համբույրով խայթեցին նրան:
Բյուր կեղծիք ունի իր ակունքի մեջ
համբույրը մարդկանց, համբույրն ընկերի,
Որով որսում է գաղտնիքը սրտիդ
և դարձնում է քեզ հավիտյան գերի:
Ի՞նչ է ընկերը և բարեկամը՝
նենգ ու դրուժան, չարակամ ու վատ:
Իմ հոգում մեռավ սիրո մի երկինք,
մի վառ արեգակ, և՛ սեր, և՛ հավատ:
Բարեկամն ի՞նչ է. լավիդ նախանձող,
քայլիդ խուզարկու, բամբասող, ագահ.
Ծանոթ շները չեն հաչում վրադ,
ծանոթ մարդիկ են հաչում քո վրա:-

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

...Ատում եմ, ավա՛ղ, և հայրենիքը՝
պերճ արոտավայրը հարուստների ցոփ,
Որի հողն արնոտ անդուլ հերկողը
չոր քար է կրծում իր հացի հանդեպ:
Ի՞նչ է օրենքը՝ մարդկանցից օրինած,
բիրտ ուժեղների այդ սուրը դաժան,
Անզորի գլխին կախված հավիտյան,
խեղճին խողխողող, հզորին պաշտպան:
Եվ իրավունքը, և՛ օրենքները
բոլոր զայրույթով ատում եմ, ատում.
Գարշ իրավունքով բռնաբարում են
և գարշ օրենքով լլկում ու մորթում:

Յոթն անգամ ահա՛ ատում եմ, ատում
իշխանությունը՝ սերունդներ լափող,
Անհագ վաշխառու, անկուշտ ձրիակեր,
պատերազմների հավերժ հերյուրող:
Անցած դարերի, գալիք դարերի
մեծ դահիճն է նա և մեծն ավազակ,
Իր անցած ուղին՝ ոճիր ու նախճիր,
սարսափներ վիժող, ոխակալ ոհմակ:
...Ապիկա՛ր մարդիկ՝ ստրուկ ու վախկոտ,
ո՞վ տվեց սուրը նմանիդ ձեռին,
Ո՞վ տվեց նրան վրեժի իրավունք
իշխել, խողխողել իր նմաններին:

ՎԵՑԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

...Ապիրա՛տ աշխարհ, ուր հզոր ոսկին
դարձնում է գողին ազնիվ, բարեհույս,
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ,
տգեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կույս:

ՅՈԹԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

...Տիեզերական հազարահանդես
դու մեծ խրախճանք, բարի՛ արեգակ,
Ահա իմ հոգին՝ մի ծարավ բողբոջ,
թափի՛ր նրա մեջ գինիդ անապակ:
...Դու միակ բարի, դու միակ իմ սեր,
դու միայն սո՛ւրբ, սո՛ւրբ, մայրակա՛ն դու գիրկ,
Դու հավետ գթոտ, մահը խորտակող,
դու գերահրաշ, միակ գեղեցիկ:

1909

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ (1886-1908)

ՍԻՐԵՐԳ

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղեն ճամբեն ես կ՛անցնիմ գինով՝
Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին...

Համբույրներ կու գան հովեն ու ծովեն,
Համբույր՝ լույսեն, որ չորս դիս կը ծաղկի,
Այս գիշեր Տոն է հոգվույս՝ Կիրակի,
Համբույրներ կու գան հովեն ու ծովեն:

Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի,
Շրթունքս են ծարավ միակ համբույրին...
Յնծագին գիշերն է լույս ու լուսին՝
Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի...

1907

ՁՄՐԱՆ ՊԱՐՋ ԳԻՇԵՐ

Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

Պարզ, լուսածածան, հրաշալի՛ գիշեր,
Հոսե՛ սրտիս մեջ դյութանքիդ ալիք.
Ձերմակ երազիդ ցայտքերեն մեղրիկ
Պուտ-պուտ կաթեցո՛ւր հոգվույս սիրաջեր:

104

Կ՛ուզեմ, որ դադրին ձայներն այս պատիր,
Ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ.
Կ՛ուզեմ, որ մեռնի՛ն տիվ ու ժամանակ,
Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր:

Ու դաբիրներո՛ւդ իյնամ ծնրադիր
Այս պաղատագին շարժուձևիս մեջ,
Ու մինչ կ՛ողողեն զիս ցոլքերդ անշեջ,
Աչքերս ալ մոռնան տակավ այս նատիր:

Ցնորաբե՛ր գիշեր, ա՜հ, ընդունե՛ զիս,
Ընդունե՛, միստիք ո՛վ անդորրություն,
Իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն
Եվ համբույրն անանց, զոր կու տա հոգիս:

Սենյակս է լեցուն հուշքերովն աղի
Երեկի հովին վայրագ տարփանքին.
Ու դեռ կը հծծեն խորշերն ողբագին
Վախը գրգանքին անոր կատաղի:

Ներս խուժե ուժգին, ներս պատուհանես
Ու լեցո՛ւր խցիկս, մինչև կաթոգին
Քու սրբությունով իր խորշերն հորդին,
Եվ ես արթնամ վաղնջուց քուներս:

Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

1907

ԱՐԵՎԻՆ

Հարավի մեղմ ու լիաշունչ հովին հետ,
Որ վաղուց երազված համբույրի մը պես
Իմ սիրակարոտ հոգիս
հեշտանքով կը լիացնե,
Շողա՛, ո՛վ արև, շառափներովդ ոսկեծայր, տարափ
Մառախլապատ Երկունքիս մեջ,
Ուր Մտածումը կը դեգերի ուղեմոլար,
Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ...
Պատուհանիս հեղուկ ծոցին մեջ
ինկած խելահեղ,
Միջօրեի հեշտադալար ու բոցակապ
երազին գիրկը,
Թևատարած կըսպասեմ.
Պլլե՛ զիս բոցեղեն ցանցերուդ մեջ փաթաթի՛ր
Ու օրորե՛ ջերմագին
Ու կիզանուտ համբույրիդ տակ. կիզիչ, այրող
Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ
Մանուկներն ընդարմացած:
Մինչև որ
Կանգնիմ նորեն ու անցնի՛մ դարձյալ
Տարփանքիս խանդաղատ ճամբաներեն:
'Հիվա՛նդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛...
Հոգիս թռչնիկ մըն է՝
Օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ,
Բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի, խորքից
Անտես ու ստվերոտ սանդուխներու վրա
Կ'իյնա շնչահեղձ:
Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ...'
Ճառագայթող գոլիդ մեջ հեշտագրգիռ,
Մինչ կը խժա տարօրինակ, բզզում է
խոլ պարը զամբուռներուն՝ պիծակ
Հուրքե՛դ գինովցած,
Ու, մինչ թուփ ու ծաղիկ
ծարավեն կը մարմըրին,

Ես կ՚ըմբռշխնեմ խտոտանքն աստղուն՝
Եթջանիկ տիպանդիսն,
Հարմրեմն ու գիտակից
Գիտնական մը հետաքրքիր:

Աքսախեղ՝ գինով լույսն ու տաքն,
Օրորվելով մաքուր շունչ մը հեսն.
Մինչ ես ձյուրեր ծարիկ իրենց հոտսն,
Ջոր խոլարար սիրել ես շտաքն:

Ու լույսն աղոց՝ աչխոս պարիսպն,
Հրմայազեղ ու վարպետիսկ արձաթ,
Շտապիմնեմ կ՚իջնեք զուրկ սեր ես:

Ա, ոեռ տաստիկ գիշերին վիճակ
գիս չընդգիմաց,
Վերջին աղաչ մըն ալ
Փարի՛ հոգիդս խաղարար ու կաթոգի՛ն,
Հիմի՛ եսլ, բարի՛ արի, շոսյ՛, շոսյ՛...

1906

ԱՓՍՈՒՄՆԱՀՈՍ ՀՈՍՔԸ ՏԱՆ

Ծառիկները հուշիկ բերթեր ես ղփող
Հորտանքով օծուն հսկիկ իրիկուն,
Հոգնեցուն կ՚իջնե երազ սը բուրյան,
Ի՛նչ հեշտանքե է սըեհշողնը այս սաստիկ:

տոմսոտ

օրկա խաղալուն

Ո՛ զյուսիկին դեմ նստած,
Երխտասարդ ու պչրուտ,
Գարեգնեղբը վերեն վար
Վազող ջուրին նըստեր.
Ա՛լ խափրացած իսկ զեղտի
Անդրպաճառ գուսան
Ո՛ւռռոյուղը խաշնող
Ու լռուքենքեն արխալուտ:

Գիշերայինն ջրատարի
Ճայնն է. լույսն մեջ կայծա՛
Ըշխին աչքուն կռսաւած
Ոտքը ձախի, բախն ուսին.
Գարեգնեղբայր վա կ՛ըզնե
Ձեռքեն բռնած մը մրգաստաց,
Ոտից, շրայշ

Հոկտ, զեղտ մը ըզբե ցայգուն
Ձրախին արձակո՛ց
Ի հորձքին մեջ ծեծկոտ
Անդուլ խառնուածը ու խուճապ.
Ա՛լ հաւրացած խնձոր
Հոկտ, առուն հորդառատ
Գալարվելն ծոցն է նեղնկոր
Գետեզ առաքած իր ջուրին,
Որ արձ կ՛աթի:

Հանգչի մը առվակած
Ջրանկին անկն կ՛օրորեն
Ընձուղտաձև հյուսիսացիք
Խուռը մը ծայռի ըստինքները.
Ավելի բարի՛ կ՛աղերսեն
Հնից ծառը տարիները,
Ողոց ստվերն իրա շրաքին մեջ
Ներեն բոնք մը մրգաստաց,

Ճուրքեր անուլ մը բացվի,
ջուրն անուռար կ'ոռոգէ
Վարդենիքը, թրթռատուն
և աշուղը բոլոր.
Բախի նիհար խարիսխով
նայիր առուն մը թեքէ
Օձաձաւուկ ձնեղոտ
հնդուկ իրեն որոր:

Ջուրն անընդոց կը հոսի,
աշուղը մը լեռան,
Ու, դարձուցէք, մի կտչէ
ձեր մը մուրքն ընդեղեն.
խոհերուն ու սիրէն մեջ
բարեր խմուլ մի հնչեն,

Ու ցրվիներ՝ ղուանիսի
արշալոյս, անկոչ մը հոսի:

Ու կ'երիտասարդ
ջուրն անուռար ոռոգէ
Վարդենիքը, թրթռատուն
և աշուղը բոլոր.
Բախի նիհար խարիսխով
նայիր առուն մը թեքէ
Օձաձաւուկ ձնեղոտ
հնդուկ իրեն որոր:

Հոսիր, առուն մը հասնի
ցանկապատն ալիքները,
Եվ երգի քուն մը ան զա՛
պլպլուած իր զոտիները.
Այդ մը կ'անցկի, տեղեղո
ձա՛փ մը զարեղ ցնծագին.
Վարդն ալ հայտ, մեղմ մեղմիկ
մը ևս երեր ան ալ:

Ու, դարձուցեք, դարձուցեք,
կը կոչե ձայնն անխափան:

Աղջնակ մը, արիշին
տակ նստած, շեր կը կանչե,
Ու հոգնաբեկ մըշակին
օրորի մը պես կու գա.
Հողը ծրծեց ջուրերուն
տարփանքն, որ դեռ կը հնչե,
Եվ հիմակ՝ թաց, կը խոկա
իր երկունքին ապագա:

1906

թառմա
երգ

ՀՅՈՒՂԸ

Դաշտի ճամբու մը վըրան,
Կամ ըստորոտը լերան,
Ուղևորին ժամանման
Ըսպասող հյուղն ըլլայի:
Ու գգվանքիս կանչեի
Ես ճամբորդներն անժաման.
Ու ճամբուն վրա մենավոր,
Ու ճամբուն վրա ոսկեման,
Եկվորներուն դիմավոր՝
Ծըխանիս ծուխն ամպեի:

ոսկեհյուս

Ու գրգանքիս կանչեի
Ուղևորներ պարտասուն
Ու բարևի մը փոխան
Հազար բարիք ես տայի:
Հազար բարիք ես տայի.
Գոլը կրակին ճարճատուն,
Կութքը բերրի դաշտերուն,

հոգնած

բերք

Բոլոր միրգերն աշունի,
Ու մեղր, ու կաթ, ու գինի...

Ու լըսեի ես ցայգուն
Քովը կրակին ճարճատուն
Երգն իրիկվան եկվորին.
Ու ջամբեի ես ցայգուն
Երազներով պատարուն
Ինջ՝ իրիկվան եկվորին:

Ու լըսեի ես այգուն
Սրտապատար ու տրոփուն
Գովքն իրիկվան եկվորին.
Ու դիտեի ես այգուն,
Ու խոկայի օրն ի բուն
Երթն իրիկվան եկվորին...

Ու ձմեռներն ալ համբուն,
Հըրավիրակ զըվարթուն,
Կանգնեի քովը ճամբուն.
Ու ձյունապատ հեք մարդուն
Ես հայրորեն, լայնաբաց
Երկու թևըս պարզեի.
Միշտ քաղցրագին, նյութացած
Հըրավերն ես ըլլայի:

Ա՛հ, ըլլայի՛, ըլլայի՛,
Դաշտի ճամբու մը վըրան,
Կա՛մ ըստորոտը լերան,
Ուղևորին ժամանման
Ըսպասող հյո՛ւղն ըլլայի:

1907

գիշեր

սնեի, տայի
լեցուն, համակված

սրտալի

լուսաբացին

շարունակ
հրավիրող
մոտ
խեղճ

ՆԱՎԱԿՆԵՐԸ

Նավակներ մեկնեցան՝ ամենն ալ
բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամենն ալ՝ ծըփանուտ
երազիս ափունքեն.
Անձուկին բոցը զիս պաշարեց:
Ըսպասման հիվանդն եմ:
Հոգեսարս դողերով և հուրքով
միշտ ցայգերն են հըղի.
Գիշերներն ես համբուն կը սպասեմ
ծիրանի այն դարձին.
Ու ցայգուն ալ կ՛անցնիմ ավազուտ
ափունքեն՝ դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի
կայծերով առլըցուն:
Դարձուցեք նավակներս հողմավար,
ջրանույշ պայիկներ,
Դարձուցեք նավակներս դյութավար,
իրիկվան հովիկներ…

1907

լեցուն

թախիծ

սարսափեցնող

շարունակ

դիցանուշ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ (1884-1915)

ՁՈՆ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
- Քեզի ընծա՛, իմ հայրենիք, -
Սոսյաց անտառն էի զայն կտրեր...
- Քեզի ընծա՛, հի՛ն հայրենիք, -
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ:

սոսիների

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.
- Ձեզի ընծա՛, հա՛յ պանդուխտներ, -
Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծղոտ...
- Ձեզի ընծա՛, հե՛զ պանդուխտներ, -
Եղեգնյա գրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո՛ղք ելաներ:

այլ աշխարհի
խեղճ

Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
- Ձեզի ընծա՛, սուրի՛ զոհեր, -
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն...
- Ձեզի ընծա՛, կրակի՛ զոհեր, -
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:

եղեգնախոտ

Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.
- Քեզի ընծա՛, հա՛յր ալեհեր, -
Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
- Քեզի ընծա՛, մա՛յր կարեվեր,
Եղեգնյա գրչով օջախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ:

կտրեցի
ծանր վիրավոր

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
- Չեզի ընծա՛, հա՛յ մարտիկներ, -
Գրիչս եղավ անթրոց սրտերու հնոցի...
- Չեզի ընծա՛, քա՛ջ մարտիկներ, -
Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

1909

ԿԱՐՈՏԻ ՆԱՄԱԿ

Կը գըրե մայրս. «Ո՛վ իմ որդյակս պանդուխտ,
Դեռ մինչև ե՛րբ պիտ անծանոթ լուսնի տակ
Օրերդ անցնին, դեռ մինչև ե՛րբ հեգ գլուխդ
Ես չսեղմեմ լանջքիս տաք:

Հերի՛ք օտար սանդուղներե ելլեն վեր
Ոտքերդ, որ օր մ՛ափերուս մեջ տաքցուցի.
Հերի՛ք ալ սիրտդ, ուր իմ ծիծերս եմ պարպեր,
Դատարկ սրտես դուրս հյուծի:

Ջահրակին տակ թևերս աշխատ հոգներ են. ճախարակ
Կ՛հյուսեմ պատանքս ալ ծամերովս ըսպիտակ.
Ա՛խ, քեզ տեսնեն անգամ մ՛աչքերս ու փակեն
Թող հոգիս ալ իրենց տակ:

Դռանս առջև կը նստիմ միշտ տխրալիր.
Լուր կ՛ուզեմ վրադ ամեն կռունկե, որ կանցնի.
Այն ճյուղն ուռի, զոր քու ձեռքով տնկեցիր,
Վըրաս կ՛ընե հովանի:

կրակխառնիչ

ծխնելույզ

1908

Այդ բաղաքիսի նոտեն զոտրն ընշ, նոնմ՝ն,
Ս՛նացեր է խոյ ան սիայն ձաշարի,
Որուն սայրն օր մ՛հշե՛, որոյմ՝ի, ոեո զաոնուի,
Կեռասի ախիկ ընշ զարի:

Թ-եիփսի բրնձի ն ասիսրտոսի ասիսիասիկն
Ս՛նունդ կուտասե ատոր պեռճ ոսմիկն.
Տոսպ սաեդասե կի սահտոեմ բուրդն ասիսիասկն.
Ան զոն սրն է ձաեդիաձկն:

Դարձկո, պճդաճ կարդոսի զերսկն իր խասմի,
Գիտե սորձեր կայսերէ խասոար ձաոյսոր.
Իր ատյան սրոց ախձ կասի, ձա՛նցո ոսոյախ,
Ոպձերո խոզաճ ասդձտՍ վտովսանդոախ»:

1908

ՅՈՐՅԱՆԻ ԾՈՎԵՐ

Հովեր կ՛անցնին.-
Ու ցորյաններս հուշիկ-հուշիկ կ՛արթննան.
Իրենց խորքեն կը հոսի դող մ՛անսահման:
Գեղադալար կողերն ի վար բլուրին
Ծովեր կ՛անցնին:

Հովեր կ՛անցնին.-
Այնքան կ՛հորդի, կը կատղի դաշտը հուռթի,
Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:
Գոգին մեջեն ալետատան հովիտին
Ծովեր կ՛անցնին:

Հովեր կ՛անցնին.-
Ու ցորյանին պատմուճանները ծփուն
Մերթ կը պատռին, մերթ կը կարվին փողփողուն:
Ըստվերի մեջ, լոյսերու մեջ փրփրագին
Ծովեր կ՛անցնին:

Հովեր կ՛անցնին.-
Քիստերուն տակ կ՛ալեծփին եղիներ,
Ուր լուսնակն իր սափորին կաթն է հոսեր:
Կալերեն գյուղ, գյուղեն մինչև աղորին
Ծովեր կ՛անցնին:

Հովեր կ՛անցնին.-
Ջմրուխտներով կը ծփա դաշտը անհուն:
Ծիտը կ՛երգե՝ թառած հասկի մ՛օրորուն,
Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին
Ծովեր կ՛անցնին,
Հովեր կ՛անցնին:

1914

վերնազգեստ

հասնող ցորեն

ջրաղաց

ՀՈՒՆՁՔ ԿԺՈՂՎԵՄ...

Հունձք կը ժողվեմ մանգաղով,
– Լուսնակը յարս է–
Ակոս-ակոս ման գալով:
– Սիրածս հարս է:–

Գլխեքաց եմ ու բոբիկ,
– Անո՜ւշ են հովեր–
Արտերուն մեջ թափառիկ:
– Մազե՛րն են ծովեր:–

Ցորեն, կակաչ կարոտով
– Կաքավը կուլա–
Կապեցի մե՛կ նարոտով:
– Չեռքերն են հինա:–

Հասկերուն մեջ՝ վերևեն,
– Ասուպը անցավ–
Աստղեր մյուռոն կը ծորեն:
– Դեմքը լուսացավ:–

Քանի՞ խուրձեր շաղերով
– Վարդենին թաց է–
Ես կապեցի խաղերով:
– Ծոցիկը բաց է:–

Արտս խոզանով մնաց,
– Կ՛երթա՞ լուսնակը–
Դեզերով լեռ եմ շինած:
– Սի՛րտս է կրակը:–

Մանգաղս քարին եկավ.
– Յարս յա՛ր ունի–
Քարեն լորիկը թռավ:
– Լե՛ռդս կ՛արյունի:–

1918

ՍԱՅԼԵՐԸ

Գյուղի ճամփայեն սայլերը կ՛երթան
Հունձքով բեռնաբարձ:
Մայրամուտին մեջ շարժուն բուրգեր են՝
Ճաճանչներ հագած:

Թխադեմ տղաներ, դեզերուն վրա,
Կը խթանեն մերթ
Մեծդի եզերուն կողը սրսփուն,
Կողը լուսաշերտ:

Գոմեշներ՝ համառ, ետև կարկառած
Իրենց մութ լեզուն,
Կը քանդեն որան, որ կը հեղեղվի խուրձ
Իրենց նուսերուն: ուս, կոնակ

Ցորեններ ի լյուղ պերճ արյունին մեջ լող տալով
Իրիկնադեմին՝
Նոր պսակ կ՛ըլլան պսակին վրա
Անոնց եղջյուրին:

Ճամփան՝ արտերեն կալերը մինչև,
Կը ծփա հասկով,
Ջոր ուշ մնացած հավեր կը քրքրեն
Ջվարթ կտուցով:

Ճամփան խարտյաշ է, կարմիր է ճամփան,
Որուն եզերքին
Արյուն կը ծորե չափազանց հասուն
Փոշոտ մորենին:

Սայլերը կ՛երթան՝ անդորրության մեջ
Աղաղակելո՛վ...
Կը տանին արև, հրդեհ կը տանին
Հսկա դեզերով:

Կը տանին հեղեղն ահա լեռնացած
Քրտինքի, Հույսի,
Որ լուծեն մինչև անիվներուն վրա
Առատ կը հոսի:

Կ՛երգեն տղաներ՝ խթանելով միշտ
Կողը եզերուն...
Ջինջ անհունին մեջ զիրենք կ՛օրորե
Ցունցը դեզերուն:

Կ՛երգեն ճպուռին, մանգաղին նման,
Կ՛երգեն հովի պես,
Մինչ հասնին կալերն ու հոն տարածեն
Հունձքը ծովի պես:

1914

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ (1869-1951)

(Հատված «ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ»-ից)

Իջեք, իջեք, երազներ,
իջեք զգո՛ւյշ, երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ երազներ,
իջեք, քնքո՛ւշ երազներ:

Ծաղիկ, կանաչ, թարմ հյուսեր,
բախտի կարկաչ ու հույսեր.
դող ու անձուկ ու կարոտ,
ծածուկ արցունք վարանոտ.
խելքի, մտքի հակասում,
միշտ նո՛ր կյանքի սպասում...

Իջեք, իջեք, երազներ,
իջեք զգո՛ւյշ, երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ երազներ,
իջեք, քնքո՛ւշ երազներ:

Գգվանք, ժպիտ, գույն ու բույր,
աչեր վճիտ ու համբույր.
իղձեր անվերջ, անմեկին,
տագնապ ու տենչ մոլեգին.
օրոր, գրգիռ ու հույզեր,
սրտի թրթիռ, երգ ու սեր...

Իջեք, իջեք, երազներ,
իջեք զգո՛ւշ, երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ երազներ,
իջեք, քնքո՛ւշ երազներ:

Աստղեր թովիչ, բոց ու կայծ,
ցնորքներ՝ վառ ու առկայծ.
հավատ ուժի, մեծության,
փառքի, կամքի գոյության.
շռինդ, թնդյուն, հպարտանք,
իմաստություն... բյո՛ւր պատրանք:

Իջեք, իջեք, երազներ,
իջեք զգո՛ւշ, երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ երազներ,
իջեք, քնքո՛ւշ երազներ:

1912

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ (1885-1920)

ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ըստվեր անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ՝ ճերմակ շորերով...

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց,
Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին.
Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

1908

ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ

Աշուն է, անձրև... Ստվերներն անձև
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ
Անձրև՛ ու անձրև՛...
Սիրտըս տանջում է ինչ-որ անուրախ
Անհանգստություն...
Սպասի՛ր, լսի՛ր. ես չեմ կամենում
Անցած լույսերից, անցած հույզերից
Տառապել կրկին.
Նայի՛ր, ա՛խ, նայի՛ր՝ ցավում է նորից
Իմ հիվանդ հոգին...

Անձրև է, աշուն... Ինչո՞ւ ես հիշում,
Հեռացա՛ծ ընկեր, մոռացա՛ծ ընկեր,
Ինչո՞ւ ես հիշում.
Դու այնտեղ էիր՝ այն աղմկահեր
Կյանքի մշուշում...

Դու կյանքն ես տեսել, դու կյանքն ես հիշում-
Ոսկե տեսիլներ, անուրջների լույս...
Ես՝ ցուրտ մշուշում.
Իմ հոգու համար չկա արշալույս.
Անձրև է, աշուն...

1906

ԱՇՆԱՆ

Նորից անձրև, մշուշ, ամպ,
Թախիծ անհուն, տխրանք հեզ,
Աշուն, քեզ ինչ քնքշությամբ,
Ինչ խոսքերով երգեմ քեզ...

Քո մշուշը, քո ոսկի
Տերևները հողմավար,
Դյութանքը քո մեղմ խոսքի,
Արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
Վհատությանն իմ խոնարհ
Եվ թփերը դողդոջուն,
Եվ խոտերը գետնահար...

Եվ քո երգը թախծալի
Իմ սրտի երգն է կարծես.
Աշուն՝ քաղցր ու բաղձալի,
Ինչ խոսքերով երգեմ քեզ...

1912

FATUM

Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու.
Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն՝
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:

Մեղմ գիշերի գեղագանգուր երազում
Այն աստղերը՝ որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին, երազուն,
Հավերժաբար իրար կապված և բաժան:

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և հարազա՛տ, և օտա՛ր...

1906

ԳԱՐՈՒՆ

Գարունը այնքա՛ն ծաղիկ է վառել,
Գարունը այնպե՛ս պայծառ է կրկին.
- Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

Այնպե՛ս գգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպե՛ս նազով են փակվում.
- Շուրջըս վառված է մի անուշ տագնապ,
Մի նոր հուզում է սիրտըս մրրկում...

Անտես զանգերի կարկաչն եմ լսում,
Իմ բացված սրտում հնչում է մի երգ.
- Կարծես թե մեկը ինձ է երազում,
Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք...

1908

ՀՐԱԺԵՇՏԻ ԳԱՋԵԼ

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով.
Բորբ արևին՝ իմ բոց սրտում, ասում եմ ես՝ մնաս բարով:

Մնաք բարով՝ ասում եմ ես բոլոր մարդկանց՝ չար ու բարի,
Տանջվող ու որք Ադամորդուն ասում եմ ես՝ մնաս բարով:

Մնաք բարով՝ ասում եմ ես ընկերներիս՝ մոտ ու հեռու,
Ոսխներիս՝ չար ու արթուն, ասում եմ ես՝ մնաք բարով:

Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին՝ խոր ու մթին,
Գարնան ամպին՝ լույս ոլորտում, ասում եմ ես՝ մնաք բարով:

Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտույտներին՝ ոսկի արտում, ասում եմ ես՝ մնաք բարով:

Ծաղիկներին՝ դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես՝ մնաք բարով:

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,
Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով:

1917

ՇՇՈՒԿ ՈՒ ՇՐՇՅՈՒՆ

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
– Բարդիներն են բաց պատուհանիս տակ,–
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում
Եվ շշնջում ես և անուշ շրշում,
Պայծառ տրտմությամբ ինձ ես անրջում
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում:

Ամպերը ձերմակ երամով անցան
Թռչունների պես, – լուսեղեն երազ,–
Դու ես, որ դարձյալ ժպտացիր անձայն
Քո հեռու հեռվից՝ անհայտ ու անհաս:

Ջրերն են անվերջ միգում հեկեկում,
– Իմ սիրտն է լալիս կարոտով անհուն,–
Թվում է, որ դու տխրությամբ անքուն
Ինձ ես որոնում աղոտ աշխարհում:

Եվ ժպտում ես ինձ, ակնարկում քնքուշ
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում,
Եվ շշնջում ես և շրշում անուշ,
Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում:

1912

«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՇԱՐՔԻՑ

***

Որպես Լաերտի որդին, որպես
Ուլիս մի՝ թողած և՛ հող, և՛ տուն,
Անցա ծովեր ու ցամաքներ ես՝
Ամեն տեղ օտար և անխնդում:

Ու հոգնած քայլով ահա կրկին
Վերադառնում եմ հայրենի հող,
Դեպի քարերըդ ազնիվ ու հին,
Եվ խրճիթներըդ՝ ահով նիրհող:

Նվագով անուշ քանի՜ սիրեն
Կանչում էին ինձ և կախարդում,
Բայց սիրտըս մաքուր, որպես ցորեն,
Պահեց անունըդ վշտում արթուն:

126

Ոդիսևսի հայրը
Ոդիսևս

երգով դյութող ջրահարս

1916

1917

Ցուրտ հեռուներում, անլռելի
կրկեսների մեջ, արտով մոլոր,
երազում էի քո սիրելի
եվ մեղմ երգերը, որպես օրոր:

Ու կարոտակեզ ահա կրկին
Վերադառնում եմ, որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին երգին
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...

1916

***

Իջնում է գիշերն անգութ ու մթին,
Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,
Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին:

Թող կիտվի խավարն ավելի խրթին,
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա՛, թե կա, ավելի՛ չար բոթ,
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
Մի հեգ նաիրցի՝ գնում եմ անկանգ.
Թող գուժկան գիշերն ահասաստ դավե.
Որքան մութը՝ սև, այնքան ես՝ համառ,
Երկնի՛ր, իմ երկի՛ր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին, և պսակըդ՝ վեհ...

1917

լուսաբաց
կսկիծ, մրմուռ

խեղճ

***

Մշուշի միջից,– տեսիլ դյութական,–
Բացվում է կրկին Նաիրին տրտում.
Ո՞ր երկրի արտում թախիծ կա այնքան,
Եվ այնքա՛ն ներում – ո՞ր երկրի արտում...
Որտե՞ղ են քարերն այնպես վերամբարձ
Ձեռների նման պարզված երկնքին,
Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ
Եվ գոհաբերումն այնպես խնդագին...
Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային դաշույնը քինոտ.
Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...

1915

***

Միթե վերջին պոետն եմ ես, բանաստեղծ
Վերջին երգիչն իմ երկրի.
Մահն է արդյոք, թե նինջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի:

Վտարանդի, երկրում աղոտ, տարագիր
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է, և՛ այրում.
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրրուն:

Ահով ահա կանչում եմ քեզ,
Ցոլա՛, ցնո՛րք Նաիրի.
Միթե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...

1913

***

Ինչպե՞ս չըսիր, նիկի՛ր իմ կիզիչ,
Պարզիչ վերջնական որերդ սուրսայր.
Ինչպե՞ս չըսիր, նեգուրայարք լցիչ
Հոյ մեղապատի՛կ խոցիչ Տիրայր:

Որքա՞ն որ եկա՝ արյունկոլ աչան,
Ան՝ կարմիր գոն, բոլոր ըմպիտ.
Ան հպեր նոյն առարտ վըհի,
Շարերի կոխան, խաչի՛չ իմ նիկիր:

Հինգ բո հոգի՝ որպես առատ խուճի,
Կշկարիկ հարմար պարզցիր առպատ,
Հեգ ըմպուցցիր ննրուսկ ու նիսուճք,
Ան՝ արքայարար վըն ու աղկպատ:

Ձրաս է, ու նորց, իմ Ձիրաղպի՛ն Ձիրաղպագեսո
Ջրպակիորի՛ր խաղոսիկ խնդագին,
Վարո՛ր նիսուքի զիշերուս խպիար
Հոյ յոգեպարտի՛կ խոցիչ Տիրայր:

1916

Ձեմ պպիպաճաղ իմ Վիարդին,
Որքան էլ պյուրեղս, ո՛ Շաղիրսկ
Որքան արքան պյն, սաղուկ Վրան,
Ձեմ պպիպաճաղ իմ վիարդին:
Որքան փոսաճաղ զա իմ զոն-արտին,
Որքան էլ փայլող փայլե նրան,
Ձեմ պպիպաճաղ իմ Վիարդին,
Որքան էլ պյուրեղս, ո՛ Շաղիրսկ:

Վոլոդյա, փայփայի

Վրա Գեղեցիկ կին
Սարդեսպաղ ջայոց
Ասպիսի

1915

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ (1897-1937)

ՀԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐԸ

Սիրելի Վիվանին

И так мы живем, что нельзя нам не жить.
Фет

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու,
Երկու ճամփորդ՝ պատառոտած շորերով,
Ու սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական կարոտներով ու սիրով:
Մենք սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական ինչ-որ կարոտ, ինչ-որ սեր:
Ու սիրում ենք առավոտից իրիկուն
Ճամփա երթալ ու հավիտյան երազել:
Աչքերիս մեջ մենք պահել ենք երկնային
Ճամփաների հեռուները դյութական
Ու անցնում ենք ուղիներով երկրային,
Ուր բյու՛ր մարդիկ երազեցին ու չկան:
Մշուշի պես մեր մանկությունը անցավ՝
Գորշ, անարև, անմխիթար մանկություն:
Ջառանցանքի պես մանկությունը անցավ,
Ու հեռացանք: Ու չենք դառնա կրկին տուն:
Լու՛ռ հեռացանք ու քայլեցինք անդադրում՝
Երազելով հավերժական հեռուներ:
Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում՝
Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր:
Ու օրերում բազմագույն ու բազմազան
Վառվեց, վառվեց ողջակիզվող սիրտը մեր,
Բայց աչքերը մեր արևներ չտեսան,
Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան
Որոնեցին պատահական աչքերում

Հարդագողի ուղիները* ոսկեման,
Նրա անծիր, անծայրածիր այն հեռուն:
Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
Ու սրտերում՝ արեգակներ ոսկեվառ.
Ու բզկտվեց հայացքներից անկենդան
Որբ սիրտը մեր՝ երազորեն-հոգեվար:
Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի.
Սիրտս լցվեց..., բայց չգիտեմ, թե ինչու
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի...
Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն,
Կապուտաչյա երջանկության առասպել.
Մի երկնային առնչության պատմություն,
Ու կարծրացավ սիրտս՝ անլույս ու անբեր:
Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,
Ու խնդացին լուսավո՛ր մեր աչքերին,
Բութ հեգնեցին մեր կարոտները հրկեզ
Ու հեռացան: Ու ո՛չ մի լույս չբերին:
Քույրը խնդաց, բարեկամը ծիծաղեց,
Օտար մարդիկ հայհոյեցին ու անցան:
Միայն պոռնիկը մշուշում համբուրեց,
Եվ խելագարը բարևեց կիսաձայն:
Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
- Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք...

1916-1917

հոգին ավանդող

* Հարդագողի ճանապարհ - Ծիր կաթին աստղաբույլի հին հայկական անվանումը

ՎԱՀԱԳՆ

Փրկությանդ արև՛ Վահագնին տեսար...
Հ. Հովհաննիսյան

Հրդեհի՛ աստված՝ հրդեհ ու կրակ,
Օ՛, Վահա՛գն արի: Տեսնում եմ ահա,
Որ ծիծաղում ու քրքջում են նրանք
Արնաքամ ընկած դիակիդ վրա:
Թե մի՛ֆ էիր դու... Եկան, երգեցին
Մի հին իրիկուն գուսանները ծեր,
Որ հզո՛ր ես դու, հրոտ, հրածի՛ն,
Որ դո՛ւ կբերես փրկությունը մեր:
Եվ հավատացինք՝ հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզո՛ր, մարմնացում Ուժի՛.
Իսկ նրանք եկան արյունով, հրով,
Մեր երկիրը հին դարձրին փոշի...
Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ,
Որ նետեն քաղցած ոհմակներին կեր,
Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...

առասպել

հիմքերը

1916

ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼ

Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՛ն քնար.
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի,
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի:
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում

վերձիգ

Եղեալ հիմա: Ու կարոտով աստվածդար,
Իմ՝ երգիչ եղբայրով ու հոգով,
Անհաղթելի իմ օրերի եղբայր վեհար
Ու նարեկյան իմ եղբայր վերջին սիրով,
Եղեալ մարող ու մարմող իրիկվա մեջ,
Որքա՜ն ուրու հալածական, որքա՜ն տեսիլ,
Տա՛ւ աարաձոցս կարոտն այն երիտուրեշ
Ու օրորվե՛ն եղերական ու ահաբար...
Ո՛չ ուր զուարճ չաահաջվի հնձվող բացի,
Ո՛չ ուր ձորեր չաահաջվի հնձվող բաղ,
Ու լուսահոր աահատնեերը իմ հոգու
Ե՛վ արյոք ո՞վ է եղբայր այլաբան ոգուն,
Ու զորշ աարան, ու երիտուրեշ փայտե՛ր երիու:
Ո՞վ ոարձրց ... ուր աահրան իրիկվածավ,
Ու լուսալոր աահատնեերը իմ հոգու
Ե՛վ արյոք ո՞վ է եղբայր այլաբան ոգուն,
Երեսուն տարի ընկած իմ աչքերի մեջ կարկաչի
Ղոքա տեսնեն այլ՛ծան օրերը աահաբա.
Ո՛չ ուր կրան հեռուներից ձեզ չբերի
Ու ցանկացա, որ չօրհներգե՛ ո՛չ ուր բնար
Լուսահան, այլ՛ծան զալիքը Ղարին...

«ՏԱՂԱՐԱՆ» ՇԱՐՔԻՑ

***

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնա:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա: սոխակը

Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ես չեմ ասե, նա՛ կասե վաղը,
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը,
Էշխը կրակ կըլի՝ արին կմնա: սերը

Ուրիշ սրտի համար կհալվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը,
Գոզալը լաց կըլի, կընկնի արցունքը, գեղուհին
Գերեզմանիս մարմար քարին կմնա:

***

Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սազով-քամանչով,
- Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը,- ասին:

Սակայն երբ խալխի քեֆերին ես անուշ տաղերս ասի, ուրիշների
- Ամառվա մրգերի նման անու՛շ է քո բառը,- ասին:

Բայց խալխի անսիրտ քեֆերին ես տխուր, մենակ մնացի.
Ուզեցի թողնեմ-հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին:

Եվ սրտիս ցավից հուսահատ ես մեռ թաս օղի խմեցի.
- Չարենցը ցնդած-գինեմոլ, հարբեցող-հիմար է,- ասին:

Ու ձմռան բուքերի միջին ես բորիկ ու մերկ մնացի.
- Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մեջ ամառ է,- ասին:

Ասի, թե՝ մարդ եք ախար դուք, չե՞ք տեսնում մարմինս ծվատ:
- Չարենցի հոգին տաղերում աննկուն, համառ է,- ասին:

Խնդացին, քրքջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ.
- Դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է,- ասին:

***

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ուր էլ լինեմ՝ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

1920-1921

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Թողած Կարսում, գետի ափին,
տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին
ու հայրենի երկինքը մով
Եվ Կարինե Քոթանճյանին
անգամ չասած մնաս բարով՝
Ա՛նց եմ կենում հիմա օտար
քաղաքների ճանապարհով:

Անց եմ կենում. շուրջս՝ մարդիկ,
շուրջս՝ դեմքեր հազա՛ր–հազար.
Շուրջս աշխարհն է աղմկում,
մարդկային կյանքն անհավասար.
Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու,
և ո՞վ կասի, թե ո՞ւր հասար.
Դեմքերը, ա՜խ, բութ են այնպես,
կարծես շինված են տապարով:

Գորշ, տաղտկալի ու խելագար
երգ է կարծես այս կյանքը մի.
Ինչ-որ մեկի սրտում բացված
վերք է կարծես այս կյանքը մի,
Եվ ո՞ւմ համար, էլ ո՞ւմ համար
կարոտակեզ երգե հիմի
Սիրտս՝ լցված տարիների
սեղմ արձիճով ու կապարով:

Բայց շուրջս թող որքան կուզե
աշխարհը այս խնդա, ցնդի.
Ես՝ հաշմանդամ ու խելագար
ու հավիտյա՛ն վտարանդի,

կացնով

Դեպի երկի՛նք պիտի գնամ,
դեպի եզերքը Ամենտի՝
Իմ բա՛րձր, հին ու աստղային
երազների ճանապարհով...

Ու էլ ամեն մեղքի համար
սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ,
պիտի գնամ՝ ա՛յքս է հեռուն.
Թե Կարինե Քոթանճյանին
տեսնեք Կարսի փողոցներում,
Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ՝
մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ...

1919

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Կնոջս և բարեկամիս՝ Իզաբելլային

Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն
Կամ լուր աղետի՝ թերթերում գրած:

Ծանոթ կնոջ պես՝ այրի կամ դժբախտ,
Բարեկամուհու նման տխրատեսք,
Լուրը կշրջի փողոցները նախ,
Ապա կմտնի դուռ-դարպասից ներս...

Իբրև ծերունի մի թերթավաճառ՝
Հուշիկ քայլերով և համարյա կույր,
Կշրջի բոլոր տներն անպատճառ
Ու կհայտնվի ամեն մի բակում:

Ստվերի նման, սահած տնից տուն,
Կկանգնի անտես հյուրի պես մոայլ,
Կկանգնի, ինչպես դժնի լռություն՝
Տարածված ամբողջ քաղաքի վրա:

Եվ համր մի պահ՝ գիշերվա կեսին,
Բոլորի սրտում կկանգնի հանկարծ
Անհաղորդ, ինչպես հեռավոր լուսին,
Իմ դեմքը՝ արդեն հավիտյան հանգած:

Եվ մարդիկ՝ երեկ կյանքիս անծանոթ
Եվ երբեք, երբեք դեմքս չտեսած,
Եվ մարդիկ՝ միայն երբեմն ինձանով
Իրենց ֆանտաստիկ առասպելն հյուսած,

Եվ մարդիկ՝ անգամ երգերիս անգետ,
Մարդիկ, որ թեև՝ կյանքիս արձագանք,
Բայց եղել են լոկ վկա անտարբեր
Եվ կարծել են, թե ես վաղուց չկամ,-

Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից՝
Որպես ընդհանուր աղետից սարսված՝
Ջարմացած կզգան ինձ այնքա՜ն մոտիկ
Եվ հանկարծ այնքա՜ն թանկ ու հարազատ...

Եվ երկրում, ինչպես բարձրանա փոշի,
Եվ հոգիներում, ինչպես հուշ հառնի,
Ելնելով անցած օրերիս նաշից՝
Իմ ուրվականը պիտի սավառնի:

Եվ քաղաքներում և գյուղերում խուլ
Անցորդներն՝ իրար անծանոթ անգամ,
Աչքերում իրար և հայացքներում
Պիտի միևնույն թախիծը կարդան...

Եվ դեմքով տխուր և լուռ աչքերով
Պիտի միևնույն սուգը հաղորդեն
Երգերիս հանդեպ անսահման ներող,
Մոռացած բոլոր հանցանքներս արդեն...

Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,
Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր,
Տարտամ շարժումով գիրքը կգոցեն, կփակեն
Եվ թախիծը խոր հուշս կողողե:

Եվ գուցե միայն սենյակում մի խուլ,
Գլուխը թեքած պատկերիս վրա,
Կնայի մի կին աչքերիս տխուր,
Եվ կարցունքոտվեն աչքերը նրա:

Եվ ինչպես կյանքում՝ տարիներ առաջ,
Հուշերում հանկարծ անցյալը բուրի,
Երազանքներում գուցե իմ անցած
Եվ արդ իմ հառնած գրկում հուշերի:

Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,
Արդեն չի հառնի և ոչ մի գրքում,
Եվ ո՛չ մի գրքում՝ աշխարհում գրած,
Եվ ո՛չ մի գրքում, և ո՛չ մի գրքում...

1936

ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ

(հատվածներ)

I

Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին, աշխարհներին, արևներին,
Հրանման հոգիներին:-
Բոլո՛ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,
Բոլո՛ր նրանց հոգիներին արևավառ,
Կյանքի՛, մահի՛ այս ամեհի աղջամուղջում
Ողջակիզվող հոգիներին ողջո՛ւյն, ողջո՛ւյն:

III

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝
Այդ հին դաշտում կռվում էին ամբոխները խելագարված:
Քաղաքներից ու գյուղերից, ստեպ ներից՝ հեռու ու մոտ,
Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ:
Ով քաղաքից էր հեռացել, նա թողել էր մշուշը ծեր,
Մշուշը, որ կյանքի վրա մխաշաղախ ամպ էր դարձել:
Ով եկել էր գյուղից հեռու, նա թողել էր հողը խոնավ,
Որի վրա կյանքը հլու ո՛չ մի ոսկի հասկ չծնավ:
Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր
Լայնությունը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել:
Ով քաղաքից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ,
Նա բերել էր թոքախտավոր սիրտը՝ որպես կարմիր դրոշ:
Ով եկել էր՝ թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի,
Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի,
Բերել էր իր լուրթ աչքերում լայնությունը ստեպների...
Ընդոստացած, խելագարված, չտանելով հին կյանքը էլ,
Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կռվի էին ելել:

XV

...Գիշերի՛ դեմ գիշեր է մութ խավարամած նրանց հոգին,
Որ կարոտով մի կրակոտ սպասում է առավոտին:
Խավար է մեծ սիրտը նոցա, բայց խավարում անծայրածիր

Երկինքներ կան կապուտաչյա, հորիզոններ՝ անծայր, անծիր:
Ու աչքերում նրանց կապույտ, ուր իջել է գիշերը մութ,
Հազար բողբոջ կա կրակոտ, ու արշալույս, ու առավոտ:
Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի.
Եթե ուզեն, արևներին նոր տեմպ կըտան ու նոր ուղի...
Եթե ուզեն, արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր.
Եթե ուզեն, վար կըբերեն երկինքներից արեգակներ...
Եթե ուզեն, կամքով արի ու աշխարհի հրով վառված՝
Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

XVII

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան
Կարմիր վառվեց արևը բորբ՝ որպես կռվի ազդանշան,
Երբ բռնկվեց արևելքում արևը՝ նոր լույսով վառված,
Դուրս նետվեցին կայարանից ամբոխները խելագարված...
Դեմը դաշտն էր անծայրածիր, ուր մշուշ էր արևագույն,
Ու մշուշում շոգիացող, առավոտի մարմանդ միգում,
Կրկեսի պես՝ մի վիթխարի, խայտաբղետ, խայտանկար,
Եզերքի մոտ ճանապարհի երևում էր քաղաքը քար...
Աչքերն հառած հեռու-հեռուն կարմիր վառվող արեգակին՝
Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի Արևն էին գնում ամբոխները խելագարված...

1918

ստեպ (ռուս.)- տափաստան

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ (1900-1969)

ԵՐԿՈՒ ՀԱՆՃԱՐԵՂ ԳԼՈՒԽ

Վառվում էր վիթխարի մի մայրամուտ
Հեռու հորիզոնից մինչև անտառ.
Խոնարհ թեքվում էին թեթև քամուց
Եղևնիները սեգ, վեհակատար:

Պարում էին ճկուն ճյուղ ու տերև
Իրիկնային քամու նվագի տակ:
Միայն կաղնին կանգնած էր աներեր՝
Գլուխն անշարժ և իրանով շիտակ:

Եվ այդ պահին այդ անտառի մոտով
Դանդաղաճեմ նրանք անցնում էին՝
Ոսկեզօծված անհուն մայրամուտով,
Իրենց հանճարներով արևային:

Մեկը՝ բարձրահասակ և գեղիրան՝
Որպես նոճին արքայական այգու,
Մյուսը՝ վայրի, կոպիտ կաղնու նման,
Խոիվ գանգուրներով և ահարկու:

Մեկը՝ մարմնով, հոգով ծաղրազարդված
Շքանշաններով իրեն դարի,
Վսեմ, որպես օլիմպիական աստված,
Տիպար հզորության ու հանճարի:

Իսկ մյուսը՝ պարզ, անշուք և գլխաբաց,
Կրծքի վրա և ոչ մի ժապավեն.
Ծովածավալ հոգուն ոչ մի կապանք՝
Ճանապարհով քայլում էր վեհորեն:

Մեկը նայում էր լայն շրջապատին
Ու նշմարում ամեն հակասություն,
Որսում ամեն ժպիտ, փառք ու պատիվ,
կուռքեր էր տապալում և աղոթում:

Մյուսը, խորասուզված իր խոհերում,
Չէր նկատում կյանքի «չարն ու բարին»,
Հուժկու իր աչքերով չէր նշմարում
Մանրուքն առօրեական ճանապարհին:

Հայացքը լեռներին արևաներկ՝
Նա պատմության քայլերն էր սոսկ լսում,
Որոնք դարձան հուժկու սիմֆոնիաներ համանվագ
Նրա հոգու հուզված օվկիանոսում:

Դրանք էին Գյոթեն ու Բեթհովենը՝
Խոսքի արքան և հնչյունի արքան,
Որ զբոսնում էին դանդաղորեն
Որսի անտառներում արքայական:

Երգի, իմաստության երկու պետեր՝
Նրանք վիճում էին մեղմ ու հանդարտ,
Մերթ մռայլվում, մերթ ծիծաղում թեթև՝
Քրքրելով կյանքի կծիկը բարդ:

Եվ երազում էին երկու արքան
Մարդու, կյանքի, ապագայի մասին,
Ծաղրում կարգերը հին ֆեոդալական, ավատատիրական
Գիտությունները՝ կեղծ, խավարածին:

Ծաղրում էին նրանք և՛ հոգևոր,
Եվ աշխարհիկ ապուշ արքաներին,
Որոնք՝ որպես դևեր խավարամոլ,
Կյանքի ելքերը լույս փակել էին:

Ծաղրում էին կեղծիքը, ճորտությունն
Ու շողոքորթությունն իրենց դարի,
Եվ այն մարդկանց, որոնք իրենց լեզուն
Շինել էին սրբիչ գարշապարի:

Որոնք հացից՝ ազնիվ գործով առած,
Գերադասում էին ձրի ոսկոր.
Հեզ կատուներ՝ տխմար տիրոջ առաջ,
Իսկ արտաքուստ՝ վագրեր ամպագոռգոռ:

Նրանք խոսում էին հոգեկորով,
Հպարտ, ինքնավայել մարդու մասին,
Որ իր ազնիվ բազկով, իր հանճարով
Տիրում էր իր փառքին և իր հացին:

Որ պիտի գար, քայլեր այս անտառում,
Կյանքում, հավերժական արևի տակ՝
Առանց ապուշներին գլուխ տալու,
Հոգով ազատ և իրանով շիտակ:

Որ խոնարհվեր հիացմունքով հպարտ
Միայն հանճարների փայլի առաջ,
Անցներ առանց վախի, ճակատը պարզ,
Չզգար հոգում ստորության արատ:

Երկու մրրկահույզ երազողներ.
Նրանք անցել էին եզր ու սահման,
Խոհերն անհուն իրար էին խառնել
Երկու ծովի կամ երկնքի նման:

Վառվում էր հորիզոնն արևաներկ
Նրանց հոգում՝ նման լուսաբացին...
Թվում էր կյանքը հանճարեղ մի երգ՝
Մահվան, կյանքի, ապագայի մասին:

Անցնում էին նրանք՝ երկու տիտան,
Արքայական որսի ճամփաներով,
Հպարտ՝ իրենց անխառն ընկերությամբ
Ու երջանիկ՝ իրենց վսեմ սերով:

Եվ նոճիները՝ հեզ ու հնազանդ,
Ուժեղացող քամուց թեքվում էին.
Միայն կաղնին խշշում էր անսասան
Կռվի, հպարտության իր երգը հին:

Եվ այդ պահին հանկարծակի լսվեց
Նժույգների խրխինջ, շների հաչ,
Եվ արձագանք տվին անտառի մեջ
Հրացանի զարկերը հողմաշաչ:

Արքան էր այդ վերադառնում որսից
Իր արքունի փայլուն շքախմբով,
Ծառս էր լինում նրա ահավոր ձին
Եվ արշավում արքայական ճամփով:

Այն ժամանակ Գյոթեն՝ խոսքի արքան,
Ճանապարհից ելավ ակնածանքով,
Կանգնեց հեռու, որպես վսեմ արձան՝
Խոնարհելով գլուխը գանգրաթով:

Եվ սպասեց այդպես նա գլխահակ,
Ինչպես վայել էր հեզ հպատակին,
Մինչև անցավ իշխողն այն ստահակ՝
Գոռոզության կնճիռը ճակատին:

Իսկ Բեթհովենն ինքնավայել ու լուռ,
Դանդաղ շարունակեց իրեն ճամփան,
Մինչև անգամ առանց մտիկ տալու
Մեծաժխոր երթին արքայական:

Եվ երբ վերջին ձիավորներն անցան,
Ու փարատվեց նրանց փոշին օդում,
Կանգնեց հզոր հնչյունների արքան
Որպես կաղնի, տիտանաբար տրտում:

Ու գլխահակ այդպես մնաց կանգնած,
Մինչև հասավ Գյոթեն մոայլ ու հեզ.
Իրար հանդիպեցին երկու հայացք
Երկու կայծակնալից ամպերի պես:

— Ինչպես չամաչեցիր,— գոչեց ահեղ
Հնչյունների արքան՝ արդեն սառած,—
Որ թեքեցիր գլուխդ հանճարեղ
Այն թագակիր տխմարի գլխի առաջ:

Ու լռություն տիրեց այնուհետև,
Երկարատև, դաժան մի լռություն,
Մի լռություն, որ կտիրեր, եթե
Հանկարծ անէանար անտառն արթուն:

Խոր նայեցին նրանք իրար մի պահ,
Որպես երկու վշտաքանդակ արձան,
Ոչ ոք չարտասանեց էլ ոչ մի բառ,
Եվ, ծանրաձեմ, քաղաք վերադարձան:

Իսկ անտառում մարում էր մայրամուտը՝
Նման հանգչող սիրո գունատ բոցին,
Խոնարհ թեքվում էին գոռոզ քամուց
Եղևնիներն ու գեղիրան նոճին:

Հեծում էին անհույս ուռենիներ,
Պարում էր սոսկահար խարտյաշ հացին,
Միայն կաղնին խշշում էր խուլ՝ մի երգ
Գալիք հպարտ սերունդների մասին...

1934

ՀԱՅԵՐԵՆ

(Մի հայուհու)

Ինչո՞ւ չես խոսում հայերեն...
Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Հոնքերդ հպարտ ու կամար
Իջնում ես հայոց լեռներեն.
Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Դու չես հասկանում իմ լեզուն:
Ես խորթ եմ, օտար քո հոգուն,
Բայց քո տեսիլով խանդավառ՝
Ես երգ եմ հյուսում քեզ համար:

Հոնքերը՝ հպարտ ու կամար,
Հանց վեհ տաճարները հայոց,
Հայացքդ մաղում է ամառ:
Հայկից են աչքերը քո բոց,
Հոնքերդ՝ հպարտ ու կամար:

Իջնում ես հայոց լեռներեն,
Ինչպես թեթևոտ մեր պախրան,
Նազանքդ այնպես նաիրյան,
Հըմայքդ այնպես հայերեն՝
Իջնում ես հայոց լեռներեն:

Ինչո՞ւ չես խոսում հայերեն:
Նորքից ես թրոել դու, իմ լո՛ր,
Ջանգուն է երգել քեզ օրոր,
Մասիսն է հսկել վեհորեն,
Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

1941

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Այս գիշեր տեսա մի անուշ երազ.
Ես հայրենի տունն էի նորոգում.
Մանկության երկինքն էր բացվել վրաս,
Եվ արշալույսներ կային իմ հոգում:

Այնտեղ էր մայրս՝ հայացքը պայծառ,
Մայրենի լեզվով խոսում էր առուն,
Խշշում էր բակում հինավուրց մի ծառ…
Այնպես ծանո՛թ էր և այնպես գարո՛ւն…

Երդիկից կաթած շողն արեգական
Թվում էր հոգուս ոսկյա բանալի:
Արևն էր նայում աչքով հայրական,
Եվ քաղցր էր աշխարհն ու հասկանալի…

1940

ՈՒԹՆՅԱԿ

Ես մոլորվել եմ շատ անգամ,
Դու ինձ ների՛ր, իմ ժողովո՛ւրդ,
Խաբել են ինձ կանչերը սուտ,
Ես մոլորվել եմ շատ անգամ:
Ես որոնել եմ քո ճամփան,
Քեզ եմ փնտրել միշտ անհագուրդ,
Ես մոլորվել եմ շատ անգամ,
Դու ինձ ների՛ր, իմ ժողովո՛ւրդ:

1955

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ (1914-1984)

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք.
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր.
— Ինչ թարմություն,— ասացին,— ինչ թարմություն,— ու բացին
Լուսամուտներն իմ առջև, ու ես իմ սիրտը բացել՝
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով,
Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել,
Քաղաք իջել լեռներից, կանցներ զմրուխտ հեքիաթով՝
Երկրեերկիր շաղ տալով կակաչներն իր ձեռքերի,
Մեր երգերի լուսաբացն ու գարունը լեռների:

ԹԱԳԱԴՐՈՒՄ

Որ գարունները գան ու չգնան...

Հոգիս արթնացավ հարավի բույրից,
Ինձ է դուրս կանչում գեփյուռը նրա,
Ձյունն էլ արևի ջահել համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ հետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ.
Բարձրանամ կապույտ գահը լեռների՝
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,

Հագնեմ ծիրանին արշալույսների,
Գարնան թագավոր ինձ թագադրեմ,
Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան ու չգնան,
Որ հավերժանան զմրուխտ դրախտով,
Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնծա հավերժի բախտով:
Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ,
Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,
Երբ գարունները ողջ թագավորեմ...

***

Կուզեի նստել մի քարի վրա
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին:

Աղբյուրների պես աղջիկները գան՝
Ես ծարավ սրտով չնայեմ նրանց,
Տուն կանչե մորս ձայնը իրիկվան՝
Չպոկեմ սարից աչքս կարոտած:

Եվ նստած լռին այդ քարի վրա՝
Անդադար նայեմ իմ Արարատին,
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա
Եվ մամռած նայե իմ Արարատին:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ
(Վերելք)

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես՝ բախտիս սարերն ի վեր,
Ելնում եմ ես քարերն ի վեր,
Ելնում եմ ես սարերն ի վեր,
Քարեր, սարեր, դարերն ի վեր:

Բախտս աստղերն են վեր պահել,
Ջահել եմ ես, ու ձիս՝ ջահել,
Չեմ նկատում քարեր ճամփիս,
Չեմ նկատում սարեր ճամփիս,
Քարեր, սարեր, դարեր ճամփիս:

Շանթն է բեկվում ճակտիս վրա,
Մահ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա,
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահեր, մահեր, գահերն ի վեր:

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես՝ դեպի աստղերն անմեռ.
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Քարեր, սարեր, դարեր կան դեռ...

ՄԱՅՐՍ

Մեր հույսի դուռն է մայրս,
Մեր տան մատուռն է մայրս,
Մեր օրորոցն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս,
Մեր հերն ու մերն է մայրս,
Մեր ճորտն ու տերն է մայրս,

Մեր տան անշուքն է մայրս,
Մեր վեհաշուքն է մայրս,
Մեր տան անտունն է մայրս,
Մեր արծվաբույնն է մայրս,
Մեր տան ծառան է մայրս,
Մեր տան արքան է մայրս,
Մեր տան պուճուրն է մայրս,
Մեր հաց ու ջուրն է մայրս,
Մեր տան անճարն է մայրս,
Մեր դեղ ու ճարն է մայրս,
Մեր տան աղբյուրն է մայրս,
Մեր ծարավ քույրն է մայրս,
Մեր տան անքունն է մայրս,
Մեր անուշ քունն է մայրս,
Մեր տան ճրագն է մայրս,
Մեր արեգակն է մայրս,
Ա՛խ, մեր տան Սիսն է մայրս,
Մեր տան Մասիսն է մայրս,
.....
Մայրս, մեր հացն է մայրս,
Մեր տան աստվածն է մայրս...

***

(Մորս գերեզմանը)

Ձյուն է իջնում, կուտակվում
Մորս վրա վերևից,
Ասես փետուր է թափվում
Հրեշտակի թևերից:

Գերեզմանի այս հեռվում
Մեղմ դիզվում է թախծալից,
Մորս վրա մարմարվում,
Շիրմաքար է թվում ինձ:

Այնպես մեղմիկ է դնում
Աստված փաթիլ փաթիլին,
Որ չցավի ողջ կյանքում
Մորս ցաված սիրտը հին:
Փաթիլվում է մեղմաձյուն,
Մարմարվում է մեղմաբար,
Աստված ինքն է ստեղծում
Մորս վրա շիրմաքար:

***

Ծիածանների լարերը վրան՝
Ինձ քնար տվեց երկինքը մի օր,
Որ երգեմ գովքը իմ մայր բնության
Ու մեկ էլ երկրիս կյանքը լուսավոր:
Բայց ես երգեցի աչքերդ միայն,
Մեկ էլ աչքերիդ երկինքները խոր,
Բայց ես երգեցի հոնքերդ միայն,
Մեկ էլ հոնքերիդ կամարները վեհ,
Բայց ես երգեցի մարմինդ միայն,
Մեկ էլ քո մարմնի մարմարներն հրե,
Բայց ես երգեցի ոտքերդ միայն,
Մեկ էլ ոտքերիդ հետքերն՝ իմ սրտին,
Ա՛խ, ես երգեցի քո սերը միայն,
Որ կամուրջ քանդեց իմ բախտի ճամփին,
Ու պարտք մնացինք բոլոր ճամփեքին,
Դու՝ ինձ, ես՝ ներող մեր հայրենիքին:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ (1924-1971)

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,
Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հորից ու մորից ծնված՝
Սերում են նրանք և այն վայրենուց,
Որ էլ չէր կարող ապրել քարայրում:

Սերում են նրանք և այն ծերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում:
Սերում են նրանք և այն պատանուց,
Որ սիրահարվեց իր իսկ պատկերին:

Սերում են նրանք բոլո՛ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թե անե՛ն մտածածն իրենց,
Ի՞նչ փույթ, թե սատկեն ժամանակից շուտ:

Անվտանգ, ինչպես հրդեհն արևի,
Անվնաս, ինչպես օգտակար լորտուն,
Վախ են ներշնչում պետություններին
Մինչև իսկ իրենց կամքի հակառակ:

Արքաների հետ խոսում են «դու»-ով,
Եթե, իհարկե, լսում են նրանց,
Իսկ թե չեն լսում՝ մեկ է, չեն լռի,
Կխոսեն նույնիսկ իրենց կոշկի՛ հետ:

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ,
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չեն վախենում նրանք չար մահից,
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

1961

ԱՆԼՌԵԼԻ ՋԱՆԳԱԿԱՑՈՒՆ

(հատվածներ)

ՂՈՂԱՆՋ ԱՎԵՏԻՍԻ

Հազար ութ հարյուր վաթսունինն թվին
Հայոց այգիներն ինչ պտուղ տվին.
Հայոց արտերում ինչ բերք էր հասել՝
Դժվար է ասել:

Սակայն այդ թվին Մայր Հայաստանի
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...
Նա հետո պիտի դառնա պատանի,
Եվ երիտասարդ, և այր իմաստուն,
Անբախտ Մարոյին լացով սպանի,
Մեր հառաչանքը հասցընի Աստծուն:
Մրմուռից դաղված նրա բերանով
Սարոյի նանը պիտի ողբ ասի,
Մսրա զորքի հետ Դավիթը խոսի,
Գիքորը կանչի. «Էստի՛ համեցե՛ք...»:
Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել
Իր մոխրակալած–հրակեզ հոգին,
Եվ՝ որքան տրտում, նույնքան կենսագին՝
Տարիներ հետո նա պիտի դառնա
Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...

Միևնույն թվին Լոռուց շատ հեռու՝
Անատոլուի խավար խորքերում,

Մեկ ուրիշ մանուկ լույս աշխարհ եկավ:
Մինչ հայրը նրա՝ Գևոն կոշկակար,
Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ,
Հարևան-դրկից՝ մի-մի շիշ օղով՝
Նրա տուն մտան՝ աչքալուսանքի:
Հետո հերթն եկավ կանանց հոսանքի.
Մի թաս խավիծով կամ ձվածեղով՝
Ծննդկանի շուրջ նստեցին նրանք՝
Որդուն մաղթելով արևշատություն,
Նորատի մորը՝ շուտ ապաշխարանք,
Աղվորիկ մի հարս,
Բարի պապություն...

.....

.....

Երևի այդօր–
Եթե ոչ մարդկանց,
Գեթ ամենալուր և ամենազոր բնության համար–
Տոն էր անսովոր.
Չէ որ նա գիտեր, թե ում է ծնել,
Լսում էր չէ որ,
Թե ինչ նվագներ և ինչ անհամար,
Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում
Այդ երկու թխլիկ նորածինների
Դեռ ոչինչ չասող առաջին ճիչում...

Երևի այդօր ցերեկը ձգվեց
Քնից նոր զարթնած կտրիճի նման,
Իսկ ստվերները,
Հարված սպասող շնիկների պես պոչերը քաշած,
Լուռ կծկըվեցին...
Երևի ահեղ ջրվեժներն այդօր
Հոսեցին անձայն, ինչպես նկարում,
Եվ լույսը երգեց,
Քարը պար եկավ...

ՂՈՂԱՆՋԵՂԵՌՆԱԿԱՆ

Գարուն էր: Չեկած ամառ՝
Փուլ եկավ երկնակամար,
Ձյուն մաղեց մեր բաց գլխին,
Ձյուն մաղեց՝ կրակի՛ պես…
— Գարուն ա, ձուն ա արել…
Գետերը մեր երերման
Հոսեցին՝ երակի՛ պես…
— Արունը ջուր ա դառել…
Ձորերը շիրիմ դարձան,
Վիհերը՝ գերեզմանոց.
— Ջուրը մեր կունն ա կարել…
Ամեն քար՝ լուռ մահարձան,
Ամեն տուն՝ վառման հնոց.
— Բնավեր հավք ենք դառել…
Ինչքան բառ՝ ոռջը մրմունջ,
Ինչքան երգ՝ ոռջը լալով.
— Ջուլում էր, զուլո՛ւմ, լաո՛…
Թրի դեմ, սրի, հրի՝
Լոկ մանգաղ, լոկ բահ ու մաճ.
— Տնավեր–բնավեր լաճ…
Մեր հողը, մեր հայրենին,
Մեր երկիրն ամայացավ.
— Սև հագիր, սևսիր՛ զ մարե…
Հինավուրց տոհմիկ մի ազգ
Չմեռա՛վ, այլ… մահացա՛վ.
— Գարուն ա, ձուն ա արել…

Գարուն էր: Ամառ եկավ,
Ձագ հանեց ձորում կաքավ,
Իսկ հայը զրկվեց ձագից,
Իր պոռթկան թռնրի տաքից,

Իր մորից, հորից, յարից,
Իր բնից ու աշխարհից.
— *Գարուն ա, ձուն ա տարել…*

…Ա՛խ, ինչպես, ոնց մոռանալ
Արհավիրքն այն օրերի.
— *Աշխարհքում ով մոռանա,*
Ջուխտ աչքով թող քոռանա…
Գառնարած–հովիվ–նախրորդ
Ետ չեկան սար–ձորերից…
Կեսօրին էլ ո՞վ երգեր.
— *Սարերը հով չեն անում,*
Իմ դարդին դարման անում…
Հնձվորը արտում մորթվեց
Իր ձեռքի սուր մանգաղով…
Խեղճ հարսը էլ ո՞նց երգեր.
— *Քաղվորին հաց եմ բերում,*
Բերանը բաց եմ բերում…
Չկնորսը Վանա ծովում
Չփրկվեց ճարպիկ լողով…
Աղջիկը զո՞ւր էր կանչում.
— *Իմ ծամթել պրամ լողվորչուն…*
Երկրի մեջ մարդ չմնաց՝
Մարդ թաղեր մարդու նման…
Ա՛խ, մնար մե՛կը գոնե
Ու կանչեր.
— *Դլե յամա՛ն…*
Ա՛խ, ինչպես, ոնց մոռանալ
Արհավիրքն այն օրերի.
— *Աշխարհքում ով մոռանա,*
Ջուխտ աչքով թող քոռանա…

ՂՈՂԱՆՋ ՄԹԱԳՆՈՒՄԻ

.....

— Քանի՞ ժողովուրդ Վանա լիճ ունի,—
Օտար գրքերում և օտար լեզվով
Օտար մարդիկ են այս հարցը տալիս,
Եվ ոչ թե Վանից զրկած վանեցին,
Որ հարց չի տալիս, այլ հաստատ ասում.
— Էս կյանքում՝ մեր Վան,
Էն կյանքում՝ դրախտ...

Ա՛խ, Բիայնայի ու Բզնունիքի,
Տուշպա և Վանա սրտաձև ծովակ:
Վարագա սուրբ սար,
Սիփան ու Նեմրութ
Իրենց ստվերը՝ ուռկանի նման, նետում են այնտեղ
Եվ տառեխի տեղ
Որսում են գույներ, որ անուն չունեն,
Որ անո՛ւն չունեն...

Իսկ Այգեստանի բույրերից արբշիռ
Եվ Արտամետի հոտերից գինով՝
Խոր քուն է մտնում քամին Ոստանում,
Այն խնձորենու հոծ սաղարթի մեջ,
Որի պտուղը թափահարելիս
Լսում ես ներսից
Ձույլ կորիզների իրար զարնումը
Դեղին սաթերի հատիկների պես:
Փրկված վանեցին այսուհետ միայն իր երազի մեջ
Կարող է լսել այդ ձայնը ծանոթ և օտարոտի...

— Եթե խելք ունես,
Եկ մի՛ թոցըրու...

1957-1958

ՆՈՐՕՐՅԱ ԱՂՈԹՔ

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շա՛տ եմ վախենում
Բյուրավոր ու բո՛ւթ հավատացյալից,
Բյուրատեսք ու սո՛ւտ հավատացյալից:
Եթե աստված եք,
Փչեցե՛ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցե՛ք նրանց կանթեղներն ամեն,
Հանգցրե՛ք նրանց ջահերն այլազան,
Որ... եղիցի լո՛ւյս:
Եվ ո՛չ մի գավթում մի՛ ընդունեցեք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացված է:
Մերժեցե՛ք նրանց զո՛հն էլ խոստացյալ,
Որ... զոհ չգնա ինքը հավատը՝
Մաքո՛ւր-վսե՛մը,
Անկե՛ղծ-անսո՛ւտը:
Ու թե աստված եք,
Ամուր փակեցեք ձեր ականջներն էլ
Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց.
Անգի՛ր-ինքնահո՛ս-հաշվեկշռվա՛ծ այն աղոթքների,
Որով խաբում են ո՛չ իրենց,
Այլ ձե՛զ:
Եվ, բավակա՛ն է, հասկացե՛ք ընդմիշտ,
Որ աստծուն նո՛ւյնիսկ հայհոյողները
Շա՛տ ավելի են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացըրել է ինքը հավատը՝
Խոցվա՛ծ-արյունո՛տ,
Այրվո՛ղ-ապտակվա՛ծ,
Յավա՛ծ-ձչացո՛ղ,
Մանո՛ւկ հավատը,

Որ հայր դառնալու համար է ծնվել:
Ու եթե հայր եք,
Մի՛ թողեք,
Որ սուտ հավատացյալներն սպանեն նրան:
– Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
Մանուկ պահելը ծանր է ավելի…

1965

ԿԱՐԴՈՒՄ ԵՄ

Ես կարդում եմ և ... հասկանում,
Որ թեպետ և ինձ հերոսի տեղ եմ դնում,
Բայց շատ հաճախ նրա ճամփից շեղ եմ գնում.
Նա խիզախ է, իսկ ես՝ զգույշ,
Նա գործում է, ես՝ լոկ զգում,
Նա կարող է, թե տեղը գա,
Եվ զոհ գնալ, անվախ մեռնել,
Իսկ ես՝ նրան ... լա՛վ ըմբռնել,
Բայց ո՛չ նրա ճամփան բռնել...
Հեշտ է, գուցե, գրքեր գրել, ո՛չ թե կարդալ...

1957

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ (1914-1993)

ԱՆՏԱՌՈՒՄ

Անտառում ամպի ծվեններ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում.
Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Շշուկներ կային անտառում այնքա՜ն,
Եվ խոնավ-խոնավ բուրմունքներ կային...
Իրար փաթաթված ստվեր ու կածան,
Ու հետքեր, հետքեր, հետքեր մարդկային:

Եղյամն էր սունկի գլուխն արծաթում,
Միրում էր կարծես վայրի նշենին,
Հանգստանում էր հողմը բացատում՝
Ականջն ամպրոպի ազդանշանին:

Եղնիկի հորթը՝ մամուռը դնչին,
Թռչում էր իր մոր բառաչի վրա,
Եվ որսկանը թաց խոտերի միջին
Կորած հետքերն էր որոնում նրա:

Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սղոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

Անտառապահի տնակի առաջ
Խարույկն իր խաղաղ ծուխն էր ծածանում,
Եվ խարույկի մոտ եղևնին կանաչ
Սոճու հետ սիրով զրույց էր անում...

Անտառում խորին խորհուրդներ կային,
Եվ արձագանքներ կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Սակայն անտառի քունը չէր տանում:

ԻՆՉՈՒ ՀԻՇԵՑՐԻ

Քամին սարերից
Առաջին ձյունի
Փոշին է բերում
Եվ շաղ է տալիս
Բոբիկ ոտներիս
Ու փշաքաղված
Մազերիս վրա:

Շապիկիս փեշքից
Ու թևքից կախված
Մաշված, գույնզգույն,
Խաշամանման
Կարկատանները
Պոկում է քամին,
Խառնում ծառերից
Թափվող խաշամին...

Խաշամ, ինչ խաշամ,
Թեժաթուխ լավաշ.
Տավարն ուտում է
Ու չի կշտանում:

Ես լուռ նստել եմ
Կապույտ մի քարի,
Կապտել եմ ես էլ
Եվ կապույտ քարից
Տարբերվում եմ ես

Այնքանով միայն,
Որ ես դողում եմ,
Քարը չի դողում:

Գյուղ տանող ճամփով
Գնում է հայրս՝
Ցախը շալակին.

— Ցո՞ւրտ է,— հարցնում է:
— Տաք է,— ասում եմ:
— Քարին մի՛ նստիր,
Վե՛ր կաց, — ասում է:
— Տավարն, — ասում է,—
Լույսով չբերես:
Ասում է, գնում...

Անցել է ուղիղ
Քառասուն տարի:
Հիշեցրի երեկ,
Հայրս լաց եղավ:

Ինչո՞ւ հիշեցրի...

ԱՆՈՒՆԴ ՏԱԼԻՍ

Հայաստան, անունդ տալիս
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
Ալևոր կամուրջի հոնքին
Ծիծառի մի բույն եմ հիշում,
Թեքված մի մատուռ եմ հիշում
Եվ բերդի տեղահան մի դուռ,
Ավերակ տաճարի մի վեմ
Եվ բեկված մի սյուն եմ հիշում:

Հիշում եմ լքված մի թոնիր՝
Բերանին մամոռոտած մի խուփ,
Մամոռոտած որմի խոռոչում
Մասրենու վարսաթափ մի թուփ,
Աշխարհի քարերին մաշված,
Աշխարհից խռոված մի ցուպ
Եվ հեռվում ինչ–որ ուշացած
Ձիերի դոփյուն եմ հիշում:

Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ:

Ցորենի կանաչ արտի մեջ
Առվույտի կապույտ մի ծաղիկ
Եվ արտի եզրին՝ մենավոր
Մի բարդու շրշյուն եմ հիշում:

ՉԵՍ ԱՍԻ ՈՉ ՄԻ ԲԱՌՈՎ

Ա՛խ, նորից «Բարի ճամփա՛»,
Ա՛խ, նորից «Մնա՛ս բարով»...
Մի տեսակ տագնապ կա, որ
Չես ասի ոչ մի բառով:

Գնում ես, չես էլ ասում,
Թե մեկ էլ երբ ես գալու,
Եկար էլ, ի՞նչ իմանամ՝
Ո՞ւմ մոտ ես մեղքդ լալու:

Ների՛ր ինձ դու, իմ բարի,
Իմ խելոք և իմ համառ,
Հարկադիր այս ծիծաղի
Եվ թաքուն լացի համար:

Գնում ես, էլ ինչ ասեմ,
Սովոր եմ, կդիմանամ,
Թող կուրծքս մի քիչ ցավի,
Որ սրտիս տեղն իմանամ:

Մի տեսակ տագնապ կա, որ
Չես ասի ոչ մի բառով,
Ա՛խ, նորից «Բարի ճամփա՛»,
Ա՛խ, նորից «Մնա՛ս բարով»:

ՔԱՐԱՓԸ

Ա

Ծանր նստել է քարափը ձորում՝
Հյուրընկալ տերը մանկության ձորի:
Ճակատից քարե քրտինք է ծորում,
Ուսից կախվում են մամուռ ու մորի:
Նստել է ձորում՝ երկինքը դեմքին,
Ծանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հաճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
Հոգնած ճամփորդին պատիվ է անում
Ցրտին՝ տաքության հոգեպահուստով,
Շոգին՝ ձյունահամ աղբյուրով անուշ
Եվ իր ստվերի լայն առագաստով:
Չի դավաճանում ոչ մի ժամանակ
Հյուրընկալության հինավուրց ոճին.
Ինչ ունի-չունի, բաժանում է նա
Եվ չի պահանջում ոչ ոքից ոչինչ:
Նստել է ձորում նահապետորեն,
Իր մացառավոր հոնքերի վրա

Երամից պոկված փետրավոր մի ամպ:
Նայում եմ նրան
Ես արյունակցի երկյուղածությամբ,
Եվ քիչ է մնում իմ այտերն ի վար
Արցունքներ ծորեն...
Ամուր ծնոտից կուրծքն ի վար կախված
Ստվերը կարծես մորուք է մի սև...
Սատանան տանի. ինչ-որ հեռավոր
Նմանություն կա Խաչիպապ պապիս
Եվ այս հյուրընկալ քարափի միջև:

Բ

Նրա ուսերն է օթևան ընտրում
Վերջին երամը հոգնած կարապի,
Վերջին անձրևից մաշկը թրթռում,
Ու սարսռում է սիրտը քարափի:
Վերջին մշուշը հրճվում է նրա
Հոնքերի վերջին քարասունկերով,
Ու վերջին անգամ թրջվում է նրա
Մասրենու կարմիր արտասուքներով:
Արթնացող ամպի հառաչն առաջին
Գալիս մտնում է ականջը նրա,
Առաջին ծիլն ու կանաչն առաջին
Ճեղքում են թիկունքն ու լանջը նրա:
Առաջին մրջյունն իր ցավը նրան,
Մեղուն առաջին բողոքն է պատմում,
Սիրտը կոտրված կաքավը նրան
Առաջին սիրո մորմոքն է պատմում:
Ականջ է անում ամեն հարցումի,
Հրճվում բոլորի առած-տվածով՝
Վերջին ծիծաղով առաջին ձյունի
Ու վերջին ձյունի առաջին լացով:
Առաջին շողքը խուտուտ է տալիս,

Շոշափում նրա շրթունքները փակ,
Առաջին շոգը շնչասպառ գալիս,
Ստվեր է փնտրում նրա փեշի տակ:
Ձեռ առնելու չափ միամիտ մի հով
Բարակ մութի հետ իրիկնաժամի
Գալիս խաղում է նրա մորուքով,
Թե՝ «Տեսե՛ք, տեսե՛ք՝ ես էլ եմ քամի»:
Ինքն իրեն կարգին քամու տեղ դրած՝
Կոկորդը պատռում, խոսում է մեծ-մեծ,
Մինչև այրվում են ոտքերը նրա
Մամուռների տաք մոխիրների մեջ:
Նրա ճակատին թևեր են փռում,
Մագիլ են սրում ուրուր ու արծիվ,
Գալիս նրանից մի խորշ է խնդրում
Ծծից կտրված ուլը քարայծի...
Ժամանակն այսպես գալիս է, գնում,
Եվ տարու վրա ծալվում է տարին,
Ու խեղճ քարափը մենակ չի մնում՝
Խորհի, թե ինչ է տալու աշխարհին:

Ամպե՛ր, արծիվնե՛ր, կաքավնե՛ր համեստ
Եվ թափառական ուլե՛ր քարայծի,
Մի՛ չարաշահեք բարությունը մեծ
Ու համբերությունն այս մեծ քարափի:
Թողե՛ք՝ նա մի քիչ ինքն իր հետ մնա,
Իր ներսը նայի, և ո՞վ իմանա,
Գուցե թե սրտից մի աղբյուր հանի
Կամ թե այնպիսի մի հարստություն,
Որ ուրիշ քարափ աշխարհում չունի:

ՄԱՍՐԵՆԻ

Մարտիրոս Սարյանին

Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

Կախվել է ժայռը, կորընթաց իջել
Ժամանակների ջանքով անմեկին,
Երկնքի և խոր անդունդի միջև
Դարձել քարեղեն ուրույն մի երկինք:

Եվ այդ քարեղեն երկնքի միջից
Մասրի մի թուփ է գլխիվայր բուսել,
Որ դալարել է երկնքի շնչից,
Բայց ոչ մի անգամ երկինք չի տեսել:

Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի,
Երկինքն էլ երբեք չի տեսել նրան,
Միայն գետի մեջ բեկված արևի
Գունատ ցոլքերն են դողացել վրան:

Ցուրտ քամիներն են ոստերը քրքրել,
Հողմերն են ծեծել բոլոր կողմերից,
Բայց նա ժեռ քարից սնունդ է առել
Եվ ջուր է առել խոնավ հողմերից:

Չի գիջել նա իր արմատը վերջին
Արհավիրքների զարկին անխնա,
Ճոճվել է անգամ ճնճղուկի շնչից,
Բայց հողմի շնչին դիմացել է նա:

Դիմացել է՝ պիրկ պարանի նման
Արմատով կառչած քարե երկնքին,
Շյուղեր է տվել և ամեն գարնան
Քնքշորեն ծաղկել, բուրել է կրկին:

Եվ շնչում են դեռ, զվարթ սոսափում,
Գարնանը ծաղկում ոստերը նրա,
Աշնանը կարմիր մասուր են թափում
Անդունդով անցնող կածանի վրա:

Կախվել է ժայռը անդունդի վրա...
Եվ հավիտյան էլ կախված մնա թող,
Քանի քարեղեն զանգվածը նրա
Մարեենու համար երկինք է ու հող:

***

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ:
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ
Հողի մեջ այսքան օրհնություն չկա,
Այսքան վաստակած հոգնություն չկա:
Ախր ուրիշ տեղ ձյունի մեջ՝ արև,
Եվ արևի մեջ այսքան ձյուն չկա:
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,
Եկած ուսերով Արագած սարի,
Ուսերին հենված Սասնա տուն չկա:
Ախր ուրիշ տեղ
Ամեն մի քարից, առվից, ակոսից

Իմ աչքերով իմ աչքերին նայող
Մանկություն չկա...

Ախր ես ինչպես վեր կենամ գնամ:
Ախր ես ինչպես ուրիշ տեղ մնամ,
Ախր ես ինչպես ապրեմ առանց ինձ:

***

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մեջ,
Նա աղն է մեր ինքնության,
Էության խորհուրդը մեծ:

Մեր լեզուն արյունն է մեր,
Արյունից ավելի թանկ,
Մեր բուրմունքն ու գույնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք ու կանք:

Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 3

Գողթան երգեր

Վահագնի ծնունդը 5

Արտաշես և Սաթենիկ 6

Արտաշես և Արտավազդ 8

Մովսես Խորենացի

Հայոց պատմություն (հատվածներ) 9

Սասնա ծռեր (հատվածներ) 11

Գրիգոր Նարեկացի

Տաղ վարդավառի 20

Մեղեդի ծննդեան 22

Մատյան ողբերգության (հատվածներ) 24

Ֆրիկ

Գանգատ (հատված) 30

Նահապետ Քուչակ

Հայրեններ 31

Սայաթ-Նովա

Դուն էն գլխեն իմաստուն իս 38

Աշխարումըս ախ չիմ քաշի 39

Վունց օր վուր ղարիբ բուլբուլըն 40

Թամամ աշխար պըտուտ էկա 42

Աշխարըս մե փանջարա է 43

Արի համով ղուլուղ արա 45

Միքայել Նալբանդյան

Ազատություն 47

Մանկության օրեր 48

Իտալացի աղջկա երգը 50

Պետրոս Դուրյան

Սիրել 52

Դրժել 53
Տրտունջք 55
Լճակ 57
Իմ ցավը 59
Հովհաննես Թումանյան
Հայրենիքիս հետ 60
Հայոց վիշտը 61
Հայոց լեռներում 62
Հոգեհանգիստ 63
Բարձրից 64
Քաոյականներ 65
Անուշ (հատվածներ) 72
Թմկաբերդի առումը (հատվածներ) 82
Փարվանա (հատվածներ) 87
Ավետիք Իսահակյան
Մի մրահոն աղջիկ տեսա 91
Ռավեննայում 91
Մեր պատմիչները և մեր գուսանները 92
Գիշերն եկավ, գով–հովն ընկավ 93
Հայրենիքիս 93
Արագածին 94
Պանդուխտ որդին 95
Սև–մութ ամպեր ճակտիդ դիզվան 96
Էյ կանանչ ախպեր, դու բարով եկար 97
Աբու-Լալա Մահարի (հատվածներ) 98
Միսաք Մեծարենց
Սիրերգ (Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին) 104
Ձմրան պարզ գիշեր 104
Արևին 106
Աքասիաներու շուքին տակ 107
Ջրտուք 108

Հյուղը 110
Նավակները 112
Դանիել Վարուժան
Ձոն 113
Կարոտի նամակ 114
Ցորյանի ծովեր 116
Հունձք կժողվեմ 117
Սայլերը 118

Լևոն Շանթ
Իջեք, իջեք, երազներ 120
Վահան Տերյան
Տխրություն 122
Աշնան մեղեդի 122
Աշնան 123
Fatum 124
Գարուն 124
Հրաժեշտի գազել 125
Շշուկ ու շրշյուն 125
Որպես Լաերտի որդին, որպես 126
Իջնում է գիշերն անգութ ու մթին 127
Մշուշի միջից,– տեսիլ դյութական 128
Միթե վերջին պոետն եմ ես 128
Ինչպե՞ս չըսիրեմ, երկի՛ր իմ կիզված 129
Չեմ դավաճանի իմ Նվարդին 129
Եղիշե Չարենց
Հարդագողի ճամփորդները 130
Վահագն 132
Մահվան տեսիլ 132
Էլի գարուն կգա, կբացվի վարդը 134
Երբ ես հին աշխարհը մտա 134

Ես իմ անուշ Հայաստանի 135
Տաղ անձնական 136
Անվերնագիր (Իմ մահվան օրը կիջնի լռություն) 137
Ամբոխները խելագարված (հատվածներ) 140
Նաիրի Զարյան
Երկու հանճարեղ գլուխ 142
Հայերեն 147
Հայրենի տուն 148
Ութնյակ 148
Հովհաննես Շիրազ
Գարնանամուտ 149
Թագադրում 149
Կուզեի նստել մի քարի վրա 150
Հայ ժողովրդի երգը 151
Մայրս 151
Մորս գերեզմանը (Ձյուն է իջնում, կուտակվում) 152
Ծիածանների լարերը վրան 153
Պարույր Սևակ
Վարք մեծաց 156
Անլռելի զանգակատուն (հատվածներ) 157
Նորօրյա աղոթք 160
Կարդում եմ 161
Համո Սահյան
Անտառում 162
Ինչո՞ւ հիշեցրի 163
Անունդ տալիս 164
Չես ասի ոչ մի բառով 165
Քարափը 166
Մասրենի 169
Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ 170
Մեր լեզուն մեր խիղճն է դա 171

Հովհաննես Ջաքարյան և Յուրի Ավետիսյան

Քրեստոմատիա

Հայ գրականությունից անգիր հանձնարարվող

նյութեր 9–10–րդ դասարանցիների համար

Հրատարակչության տնօրեն՝ ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ձևավորումը՝ ԱՆՆԱ ՍԱՐՅԱՆԻ

Սրբագրիչ՝ ՍԵՐԺ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝ ԼԻԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ ՆՎԱՐԴ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 11 տպ. մամուլ:

«ՋԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 232528
Ֆաքս՝ (+37410) 232595, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայք՝ www.zangak.am

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

գործնական աշխատանքների
հետևյալ ձեռնարկները.

Հ. Գալստյան
ՃԻՇՏԸ ԵՎ ՍԽԱԼԸ (բառագործածության, բառաձևի և
կապակցական սխալները հայերենում)

Յու. Ավետիսյան, Հ. Ջալքալյան
ՀԱՅՈՑ ՆԱԽԱԴՊՈՒԹՅՈՒՆ,
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ջալքալյան, Յու. Ավետիսյան
ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լ. Թեքյան, Հ. Ջալքալյան, Յու. Ավետիսյան
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ENE
G. Gasparyan, N. Hovh
achberumy
ՀԱՅԵՐԵՆ ԱԶԲՈՒԿ
ԵՐԵՎԱՆ 2007